

ՄԱՍԻՍ

Շ Ա Ֆ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 15

4 ՅՈՒՆԻՍ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օրագրող եւ գրագէս	ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ
Պետրոսին (Բանաստեղծութիւն)	ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ
Դպրոցական առողջապահութիւն	ՏՈՔԹ. Վ. ԹՈՐՈՍՄԵԱՆ
Սգաւոր կիներ (Բանաստեղծութիւն Ժ. Ռոսկնպաֆի)	ՏՕՄԻՆՕ
Հակալուական պայքար (Ա. յօդուած)	ԲԻԷՌ ԱՐԷՌԻ
Տխուր լարեր (Բանաստեղծութիւն)	Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ
Շիլլերի հարիւրամեակին առթիւ	Ա. Ն. Թ.

Խմբագրական Նօթեր. — Զանազանք

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՄԱՍԻՍ Շաբաթաբերի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման 12 ֆրանք կամ 5 բուլլի: Թղթաստրական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրապարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու:
Չի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասչելի պայմաններով:

Ձեռ-Քէ ԿՐ ԾԱԽՈՒԻ ՀԱՏՐ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ


درعليه ده غلطه ده (ماسيس) غرضه سى اداره سى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ
Կ. Պոլիս, Հալաքիա

Rédaction de la Revue MASSIS
Galata, Constantinople

Ծաղկաւոր թիւ

Թէլը, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդաց գլխաւոր ըմպելիէն դարձած է, ա'յնքան բաղաժիւր տեսակներ ունի որ, որդարեւ գործածողներուն համար բուսկան դժուար է լաւ ընտրութիւն մը ընել: Այդ տեսակներէն մասնք նշանաւոր են իբր արտադրած եւ քաղցրաբոյր, մասնք ալ թէեւ նոյնքան արտադրելի համ ու հոտ չունին, գերազանց են սակայն իբր կաշառութիւն եւ զօրացուցիչ: Վերջապէս իւրաքանչիւր թէյ իր ուրոյն յատկութիւններն ունին որոնք զինքը կը զանազանեն ուրիշ, տեսակներէ:



Սակայն կայ թէյ մը, որ այդ յատկութեանց ամէնէն կարեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ գոյն, համ ու հոտ մանուշահամ կաշառութիւն եւ զօրացուցիչ տնչազական ազդեցութիւն մը, եւ այդ թէյն է ճաքոն: Երբեք, որ այդ յատկու-

թեանց շնորհիւ կը յարմարի ամէն տարիքի ու կազմութեան, ամէն կլիմայի եւ եղանակի եւ ամէն ճաշակի:

Յաւիրուեալն եւ Իսաղուխան քեյի մեծ վաճառատունը, իր բազմաթիւ յաճախորդաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս անգամ մեծաքանակ ներածած է ճաքոնական զուտ թէյ մասնաւոր եւ դակական առփերով ու կը հրաւիրէ օգտուել այս առթիւն բոլոր տնայնք, որ կը փոփաքին ունենալ թէյ մը:

Համով, հոսով, առողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկական, չինական, Սէյլան եւ Ճաւայի ամէն տեսակ թէյեր: 5-10

Ուսադրութիւն մարգարի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբու եւ կնիւնաբու (gynécologue), Տօքթօր Էմիրզէ որ 15 տարուան գործունէութեամբը մեծ համբաւ ստացած է, կը ծանուցանէ յորգոյ յաճախորդներուն թէ բնակարանը փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18: Իսկ ի վերայիշեալ իւր մասնագիտութենէ կը բուժէ նաեւ շարագոյն մէթատերութիւններ եւ հոգեկան ու երեւակայական մէկն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս նաեւ վրաստիներ եւ tic անուանուած աչքի երեսի եւ ուսերու ագեղ եւ ակամայ շարժումները եւ դաշտանի դադարումը յոռաջ եկած ջղախն խռովումները եւ երիտասարդական մօլիքները, ինչպէս նաեւ գինեմօլիքը, մօրիֆնամօլիքը եւ այլն: Կիրակիներէն դառ ամէն օր կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կընդունի, եւ ուրբաթ օրերը ձրիբար կը դարձանէ վկայեալ աղքատները: 5-10



ՅՈՎԱԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ (ՄԵՂՐՈՒՆԻ)

ՍՏԱՄԵՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Ինսպանատան

Իերա, Մեծ Փողոց, Թագսիմ, թիւ 61

Զբոսանեալն արաքսման

Պալպալեան ամէն օր ակոսայի ամէն տեսակ հիւանդութիւններով տառապողներ, կ'ընդունի: Իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գինեւրուան սր եւ է ժամուան կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու շինած ակոսաները: Ճորեկները ակոսայ քաշել տալու համար օրօշ վարձք մը չկայ: Քաշել տուողին կամքէն կախեալ է: Վկայեալ տառամտաբու ժուհի Տիկին Բօլին եւս կը գտնուի միշտ նոյն դարձանատան մէջ: Ազգացնեւրուց ճրի 5-10

CAISSE PATERNELLE ՔԷՍ ԲԱԳԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ
ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1841 ԻՆ

ԿԸ ԳՈՐԾԷ ՅՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՊԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ

ԱԿԻՂԵՆ Ի ՎԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԵԱԿԱՆԵՐՈՒԵՂԱԾ ՎՃԱՐՈՒՄ 300 ՄԻԼԻՈՆ ՓԵ.
ԱԿԻՂԵՆ Ի ՎԵՐ ԱՐՃԱՆԱԳՐԵԱԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԻՄ 700 ՄԻԼԻՈՆ ՓԵ.

ԸՆԹԱՑԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԻՔ ՅՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ

62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեստի համեմատութիւնն է 74%⁰. որով ՔԷՍ ԲԱԳԵՐՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գեր ի վեր կը հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցայց առած երաշխաւորութիւնէն:

Ընկերութեան վարչական խորհուրդը կազմուած է Ֆրանսայի մէկէն նշանաւոր դատաւորներէն, ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Ֆրանսայի եսկաթուղեաց ընկերութեան եւ Քրէտի Լիօնէի վարչական խորհուրդի անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՖԼԷՌ, Դոմինադիւնդի ընկերութեան վարչական խորհուրդի անդամ.

Մ. ԿՈՄՈՒ ՏԸ ՍԷՆ ԿԻԼԷԻՄ, նախկին գանձապահ.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քրէտի Լիօնէի.

Թուրքիոյ Տնօրէն Փ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Պալիս, Սալթան-Համամ, Բասամ Բաթրըճօղլու

Ընկերութեան վրայ տեղեկութիւն առնելու համար դիմէ՛ք Քրէտի Լիօնէի.

ԾԱՆՈԹ. — Ծանաւոր դիմի պիտի տուի այն անհայտնի որ կաշուէր աղիւնք մօ իւր լոգոսի միւս անգամ պէս:

5—10

ԱՂԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամեն քննակ բոհաֆիյէ ապրանքաց

Մեծ—Շուկայ, Քիւրքէններու դրան կէց, Թ. 41—43

Նայնպէս, արանց եւ կանանց ճաշակաւոր հովանոցներու վաճառատուն, Պալիս, Սալթան—Համամ, Միտիլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ Թօհաֆիյէի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց առանկ հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն տեղեկութիւն, եւ դիւրամատչելի գիններու առաւելութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան:

Ահամ վարդեան մեծապէս գոհ թողնուած է իր բազմաթիւ յաճախորդներէ:

Կ'որով որ Շուկայ կլլող մէկն ընտաւայցելէ անգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հաշուել համար:

5—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զոտ, մասնագիտաբար եւ երկար տարիներէ ի վեր կը դարձնէ ստամոքսի, աղեաց, միզային ճանքաներու հիւանդութիւնները, ջրային տկարութիւնները, հին եւ նոր գաղտկան խտերը: Այս վերջին խտերը՝ առանց ստամոքսի խանգարման եւ նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի մէկն օր կէս օտ վերջը: Զարեքը թիւ օրերը միայն ձրի: 5—10

ԺԻՒՐԱԿԱՆ ԱՆՏԻ ԳԷՄ ՆԱԽԱԶԳՈՒՂՈՒԹԻՈՒՆ

Ծիրական ախտի դեմ նախադրուածեան միայն ճամբայ մը կայ. այն է մարմինը մշտ
կենսական զօրութեամբ պահել որնոր դրութեան կենսական զօրութիւնն, առողջութիւնն
և դիմացողան դժ տալով կրնայ ըլլալ:



SCOTT'S EMULSION

աշխարհի մէջ ամենալաւ "ուտելիք-դեղ" է. որ շուտմը
առողջութիւնը կը վերականգնէ և երակներու մէջ նոր
հարուստ արիւն կը տարածէ:

Եթէ կազմութիւնը կատարեալ առողջութեան մէջ չէ և
բարակցաւի առաջին նշանները երեան կ'ելլեն. ինչպէս տեղա-
կան գունատութիւն, թեթեւակայն թեւաթար հազ, գիշերները
սաստկացող բարեխառնութիւն և անորժակի կորուստ ևն.
Ժամանակ վատեւելու չէ, մէկէն Ընդօթի Բաղադրութիւն
առնելու է. միակ դեղն է որ կրնայ մարդս առողջութեան և
զօրութեան վերականգնել և այս եղբրութիւնը գործնականա-
պէս կը տեսնուի վասնզի հազարաւորներ տեսած են և կը տեսնեն:

ԸՍԿՕԹԻ ԲԱՂԱԴՐՈՒԹԻՈՒՆ

կատարելապէս անուշահամ է, անորժակը կենդանացունէ, և
մարտողութիւնը կ'աճապարէ: Հիւանդութեան սերմը կը
մեղրէ և շուտմը մարմինը կը զաւայէ: Ընդօթի Բաղադրու-
թիւնը ընդմիջտ այս տեսնուած նշանով վարդապոյն փաթեթի
մը մէջ կը գտնուի:

Քիչերու վրայ ասոր ուշա-
դրութիւնը ընել պէտք է:

Բարեբեկութիւնը և բեղմնաւորութիւնը ինչպէս:

ՅԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՅ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒՅԻՆ ԿԸ ԳՈՐԾԱԴԻԷ

Ունի կեանքի, օժիշի, արկածի, ցման քուակի ճիւղեր
VICTORIA ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ'
DE բժշկական քննութեամբ եւ թէ առանց բժշկական քննութեան
BERLIN Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ
րուն վճարումները շաբաթական մասնավճարներով տեղի կունենան,
սկսեալ 5 դրուէն

Ապահովագրեալ գումար 1903ին Ֆրէ 1,325,000,000

Պահեստի դրամ 1903ին » 510,000,000

Հաստատուած 1853 սեպտ. 20ին ար-
այականորակաբաժնով եւ ուղղակի
կ'ստավարութեան հսկողութեան ներ-
քէ:

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս. Պանրա
եւ Քրէտի Լիոնէ:

Լիազօր Ընդհ. Ներկայացուցիչ
ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՖԱՅԵԱՆ

Պոլիս Բաքրեքոյու խան

Տնտես

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԷՉԷՃԵԱՆ

ՄԱՍԻՍ

54^ր ՏԱՐԻ, 2. ՇՐՁԱՆ

ԹԻԻ 15

4 ՅՈՒՆԻՍ 1905

ՕՐԱԳՐՈՂ ԵՒ ԳՐԱԳԵՏ

Տօմինօ՝ Մասիսի վերջին թիւերէն մէկուն մէջ՝ մեր գրագէտներու ներքին կեանքին և իրենց գործերուն միջև համերաշխութեան վրայ կը գրէր։ այս հարցը առաւել կամ նուազ պատասխանատուութեան խնդիրը կը չօչափէ, որուն համար գիտենք թէ ի՞նչ հարեւանցի և նպատակաւոր գրութեանքներ երևան եկան։ Ես կը կարծեմ թէ Տօմինօի հարցն ալ աւելի բաղդաւոր չպիտի ըլլայ, նկատի առնելով ու և է նիւթի մը խորը թափանցելու, որ և է հարցի մը վրայ երկարօրէն մտածելու ընդունակութեան պակասը զոր այսօր ոմանք իբր գեղեցիկ յատկութիւն մը պարծանքով կը յիշեն։— Ինչպէս կը գրեմ ներու շարքին մէջ ամենէն ցայտուն հոգեկան վիճակն էր զոր գրագէտներ խոստովանած էին։

Մեր գրականութիւնը խառնակ և կանոնաւոր դասաւորումէ բոլորովին զուրկ, դժուարին կը դարձնէ նաև այդպիսի հարցի մը լուծումը։ օրագրող և գրագէտ արմուկ արմուկի կ'երեւան այնքան օրաթերթերու՝ որքան հանդէսներու մէջ։ այլ սակայն այլևս չէ կարելի տարակուսիլ իրենց դերերուն և վիճակին տարբերութեանը վրայ։

Օրագրողը առաջնորդող դեր մը ունի, ժողովուրդին հանդէպ խորհրդատուի և նոյն իսկ ուսուցչի դերը։ իր միակ գեղեցիկութիւնը իր բարոյական արժէքին մէջ կը կայանայ, իր պարկեշտութեան, ողջմտութեան և խոհականութեան մէջ։ ինքն է պատասխանատու, բացարձակապէս, յառաջ բերած գաղափարներուն, սկզբունքներուն համար։ իրմէն է որ հաշիւ կը պահանջուի, օրագրողին

դէն կախում ունի նաև ժողովուրդին բարոյական առողջութիւնը։ Խօսքին մոգական ազդեցութիւնը իր ձեռքին մէջ է և ինքն է որ կրնայ այդ ազդեցութիւնը լաւին գործածել և կամ անով իր ընթերցողները մոլորեցնել իրենց բարոյական ընթացքին մէջ։ Օրագրողը այսպէս բարձրացած՝ ընկերութեան պաշտօնեայ մըն է, ինչպէս ուսուցիչը որուն դերը կը շարունակէ չափահասներուն վրայ։

Այլ սակայն որքան օրագրողին դերը այսպէսով կը բարձրանայ, այնքան իր գործը դժուարին և փափուկ կը դառնայ և ա՛լ աւելորդ է եզրակացնել թէ իր անհատական խառնուածքը և նկարագիրը առաջին կարեւորութիւն կըստանան։ Ինչպէս որ ուսուցիչէ մը, քահանայէ մը կը պահանջուի բարձրութեամբ լինել, ազնուութիւն, նոյնքան տրամաբանական է որ օրագրող մը պարտական ըլլայ հաշիւ տալ իր ներքին կեանքին վրայ։ զուտ բարոյական պարտականութիւն մըն է ասիկա անշուշտ, բայց անով է միայն որ իր գործը հիմ կունենայ, և իր խօսքը կշիռ։ Ի՞նչ պիտի ըսէինք գինեմուլ մէկու մը որ արեւեցութեան դէմ խօսէր, կամ խառնակ կեանքով ապրող կնոջ մը որ ժուժկալութեան և պարկեշտութեան դասեր տար։ կամ վերջապէս իր տնական գործերուն մէջէն չելլող մէկու մը որ տանտիրէնութեան, կարգապահութեան վրայ քարոզներ կարդար։ իրաւ է թէ իր չունեցած յատկութեան տենջանքը յաճախ կը մղէ գրողը ճիշդ այդ յատկութիւնը փառաբանելու և այս հակասութիւնը յաճախ տեսնուած է մեծ գրագէտներու կեանքին մէջ։ այլ սակայն օրագրողին

դերը պարզ, մեկին և շատ որոշ է, և իրեն ներելի է sentimental մոլորումներու մէջ կօրսուիլ. որովհետեւ կեղծաւորութիւնը, ծանկամտութիւնը աստիճան մը կը քողարկեն հոգիներու սեւութիւնը, չորութիւնը: Յուրտ սիրտ մը երբեք գեղեցիկ զայրոյթ մը չունենար, խարդախութիւններու, նենգութիւններու վարժ հոգի մը երբեք այն հոգեւին բողբոջը չկրնար բարձրացնել ստութեան մը, քսութեան մը դէմ. բոլոր կեղծ լալկաները, ողորմելիները չուտով կը ճանչցուին իրենց կոկորդիլոսի արցունքներէն և բնութիւնը կը մերժէ անոնց չրթունքին այն աստ-սւածային վանկը որ ազնիւ մարդոց հոգիներուն մէջ արձագանգ պիտի գտնար. իրենց հետ պիտի ունենան միայն իրենց պէս խարդախները և նենգաւորները, կոպիտներու լեզուն կոպիտները պիտի հասկնան միայն, և կեղծաւորները զիրար խաբել կարծելով՝ զիրար պիտի պաշտպանեն: Արդ, կը բաւէ քննել ժողովուրդի մը սիրուած և ընտրուած օրագրողներուն բարոյական վիճակը, հասկնալու համար այդ ժողովուրդին բարոյական մակարդակը. հետեւաբար ի նշկատի առնելով մեր ամենէն ժողովրդական օրագրողները, հղրակացութեան մը հասնիլ զիւրին բան է:

Բայց երբ խնդիրը զրազէտին կամ բանաստեղծին կուգայ, բոլորովին կը փոխուի և կամ թէ հարցը ինքնին կը լուծուի: Ուրովհետեւ, արդէն ճշմարիտ և զուտ գեղեցկութիւնը օգտակարութեան սահմաններէն դուրս և վեր՝ գերազոյն չա՛ն մը կը ներկայացնէ ինքնին. գրադէտը կամ բանաստեղծը ամբոխին համար չի գրեր. ինքզինքը արտայայտելու պէտքն է իրեն առաջին մղիչը ուրկէ կրնան օգտուիլ իրեն հասկցողութեան և մտքին հաւասարող անհատներ. իրեն տուածը վայելք մըն է և անոնք միայն որ կրնան վայելել, իրաւունքներ ունին իր վրայ. իր գործը որքան գերազոյն գեղեցկութեան մը բարձրանայ՝ այնքան իր հոգին թանկագին և տառապանքէ մաքրուած՝ կը մտերմանայ և սիրելի կը դառնայ զինքը հասկըցողներուն. ինչ փոյթ թէ Վէրլէնի մը մո-

լութիւններով և տառապանքով լեցուն հոգիէն է որ կը բարձրանայ սքանչելի երգը կամ Պօտլէտի հաշիշով գերագրգռուած երեւակայութիւնն է որ անողոք դիւային sonnetն կ'արտադրէ, Դիւսկը—«Դուն ալ այսպէս պիտի ըլլաս, սիրելիս»—թէ և երբ նոյն իսկ ամենէն մոլի համարուած հեղինակներու կեանքը պրպտենք, կը տեսնենք որ անոնց մոլութիւնները բոլորովին անհատական չաբիքներ են. հաշիշով կամ ապսէնթով գիւնովութիւնը իրենց և և իրենց սերունդին միայն կրնար յիշատել. գիտակից չարութիւն մը կամ նենգութիւն մը չկայ ուրիշին հանդէպ. պէտք է ի նկատի առնել մոլութիւններու այս երկուորակութիւնը, միջնդեռ ստութիւնը, կեղծիքը, անժուժկալութիւնը, եւլն. ճշմիւր և պզտիկ հոգիներու յատուկ ընկերային չարիք մը կը ներկայացնեն. անմիջական յիշատակ մը կայ իրենց դրացիին համար. ասոր համար է որ այդ մոլի համարուող բանաստեղծներուն հոգիին մէջ, ցաւով դառնացած և ազնուացած հոգիին խորը բարութեան և միամտութեան սքանչելի և անսահման զգացում մը կայ: Եւ արդէն ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ: Դորովանքով և խանդաղատանքով օծուած սիրտերն են որ կրնան ամէն բանի գեղեցկութիւնները հասկընալ ու երգել, և դարձեալ սիրող սիրտերն են որ սէպ ընդվզում մը կ'ունենան տգեղ և սուտ բաներուն դէմ:

Երբ բարութիւն կ'ըսեմ, բառը կ'ստնեմ իր ընդարձակ և գերազոյն իմաստով. բարութիւն ըսելով չեմ հասկնար ուրիշին ցաւը արհամարհել և կոխտելով արժանապատուութեան և հպարտութեան նուիրական իրաւունքներուն վրայ՝ ողորմութեան մը նախատինքը ընել վիշտով բարախուն սրտի մը:

Բարութիւնը հոս յուզմունք մըն է միայն, համակրանքի դողդոջուն վայելք մը որ անձկութեան զգայութեան մը մէջ կ'եղբայրացնէ ամենէն խոնարհը և ամենէն ինկածը, ամենէն սէզին հետ:

Արդ, ըստ իս, այս բարութեան ընդունակ հոգին է որ կարող է զմայլիլ, կարող է հասկնալ, թափանցել մարդոց և իրերուն

կենսական յուզմունքներուն եւ ձգտումներուն եւ հետեւաբար կարող է գեղեցկութիւնը արտադրել, միակ եւ նուիրական նըպատակը արուեստին :

Այլ ի՞նչ հարկ կը մնայ հարցնել թէ դրագէտին կամ բանաստեղծին հոգին պէ՞տք է իր գործին չափ գեղեցիկ ըլլայ թէ ոչ . իր գործը իր հոգիին արտայայտութիւնն է արդէն , անոր ձգտումներուն , տենջանքներուն , յուզմունքներուն եւ վայելքներուն ամբողջութեան ծաղիկը , իր գիրքը եւ իր երգը իր հոգին կը մատնեն արդէն , զայն կը բացատրեն , զայն ամենունը կ'ընեն , եւ գիտենք որ գեղեցկութիւնը արատ չվերցըներ :

Հետեւաբար ինքնին եղբակացութեան կը հասնինք : Օրագրողը պարտական է պարկեշտ եւ ազնիւ ըլլալ , որովհետեւ իր դերն է իր համայնքին առաջնորդել մտաւորապէս , զայն լուսաւորել , անոր տալ ժամանակին եւ պահանջներուն համեմատ լաւ , պարկեշտ եւ առողջ ապրելու սկզբունքները , մինչ դրագէտը կամ բանաստեղծը իր պարտքը կատարած է արդէն մարդկութեան , երբ շնորհը ըրած է գեղեցիկ գործ մը արտադրելու եւ հոգիները գլորելու գեղեցկին յուզմունքովը :

ԶԱՊԻՂ ԵՍԱՅԵԱՆ

ԵՐՈՒՍԱԿԵՄԻ վանական հաշիւներուն քննութեան համար Ազգ. Վարչութեան կողմէ կազմուած Յանձնաժողովին անդամներէն Պատրիկ Էֆ. Կիւլպէնկեան , Արշակ Էֆ. Գարակէօզեան եւ Խաչիկ Էֆ. Խորասանճեան հրաժարական զրկած ըլլալով , Յանձնաժողովը իր մեծամասնութիւնը կորսնցուցած է եւ չի կրցաւ իր առաջին նիստը կազմել հինգշաբթի օրը : Ներկայ էին միայն Վահան Էֆ. Սուրէնեան եւ Տիգրան Էֆ. Բարաղամեան որոնք Ս. Պատրիարքին հետ պահ մը խորհրդակցելէ յետոյ մեկնեցան : Մատուցուած հրաժարականները պիտի ներկայացուն խառն ժողովի յառաջիկայ նիստին ուր երեք նոր անդամներ պիտի ընտրուին :—Ս. Պատրիարքը ծրագրած ըլլալով սոյն Յանձնաժողովին պաշտօնը գծող հրահանգը , խառն ժողովը իր վերջին նիստին մէջ հաստատեց զայն :

ՊԵՏՐՈՍԻՆ

(ՄԵՐ ՄՕՐ ԹԱՂՄԱՆ ՕՐԸ)

«Մօրըդ արտօսըր տեսար»,
Հիմա հըրճուանքն ալ տեսի՛ր,
Քեզ պաշտելուն հաւասար
Համբոյրներովն ըղձալիր :

«Մօրըդ արտօսըր տեսար»
Հիմա զգըլխանքն ալ տեսի՛ր,
Քեզ գըտնելուն հաւասար
Երանութեամբն անկըլիռ :

Այդ ըստուերին մէջ անձայն
Թէ գայ մօտի քեզ հըլու ,
Իր երազին փորձն է այն
Քեզ վերըստին ծընելու . . .

«Երկրորդ մօրդ սեւ գոգ»էն վերջ՝
Գտա՛ր մայրիդ գի՛րկը գարձեալ . . .
Նոր երկունքի հոգին ստերջ
Պիտի խաբէ՛ երկուքդ ալ . . . :

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ

23 Մարտ 1905

Իզմիր

ԴԱԼՖԱՅԵԱՆ Որբանոցին վերաշինութեան հաշիւները՝ Յանձնաժողովին տեղեկագրով՝ Ազգ. Վարչութեան մատուցուած ըլլալով , Տնտես. Խորհուրդին յղուած էին որ իր քննութեան արդիւնքը տեղեկագրած , հաշիւներուն օրինաւորութիւնը հաստատած եւ Յանձնաժողովին աշխատութիւնը գնահատած է : Խառն ժողովը իր վերջին նիստին մէջ որոշեց գոհունակութիւն ու շնորհակալութիւն յայտնել Յանձնաժողովին .—Գալֆահան Որբանոցի 1904 տարւոյ մատակարարութեան հաշուեցոյցն եւ Պատրիարքարան զըրկուած ըլլալով , Տնտես. Խորհուրդին քննութեան յանձնուեցաւ :

Ս Պ Ա Բ Ո Ր Կ Ր Ն Ը



Հիւանդագին ու տոգոյն, հուրն է մարեր իր աչաց,
Ինչպէս լոյս մը կը մարի գիշերուան մութ ամպին տակ,
Սեւերու մէջ, սեւ քօղ մ'ալ իր նիհար դէմքն է ծածկած
Ու կը քալէ մարմնաբեկ, ձիւնին մէջէն սպիտակ:

Ձայն դիտելով կ'ըսէի.— «Ճիշդ իմ հոգիս ալ այսպէս
Սուգի մէջ է, կը հիւծի ճերմակութեան մէջ ձմրան,
Բայց որպէսզի ազատիմ տառապալիր ցաւերէս,
Բաւ է սիրել այս կինը ու գուրգուրալ իր վըրան:

Ձի մեր երկու սիրտերը որոնք չ'ունին ապաւէն
Կրնան մոռնալ ամէն վիշտ, երջանկանալ նոյն ատեն»:
Բայց երբ խորհիմ, անիկա արդէն դացած է հեռուն:

Եւ իր փէշին մեղմօրօր, մեղամաղձոտ ծփանքին
Մէջ պահ մը ինձ կը թուի լսել անոր քայլերուն
Տխուր ձայնը հոգեվար, մահուան կոչը դառնագին:

ԺՕՐԺ ՌՕՑԵՆՊԱՔ

Թարգմ. ՏՕՄԻՆՕ

Մ Օ Հ Պ. ԿԱՐԱՊԵՏ ԵԶԵԱՆՅՈՒ

Բեզերսպուրկէն Ս. Պատրիարք Հօր ուղ-
ղուած հեռագիր մը գուժեց վսեմ. Պրն.
Կարապետ Եզեանցի մահը: Հանգուցեալը
Թիֆլիզ ծնած էր 1835 Սեպտեմբերին: Իր
միջնակարգ ուսումը Մոսքուայի Լազարեան
Ճեմարանին մէջ աւարտելէ ետքը, Բեզերս-
պուրկի Համալսարանը մտաւ, և արեւելա-
գիտութեան Տոքթոր եղաւ: Պահ մը դասա-
խօսութիւն ըրաւ, համալսարանական ուսա-
նողներու համար գիշերային օթեւան մը
հիմնեց, որուն տեսուչն եղաւ, և հետամուտ
էր արեւելագիտութեան Բրօֆէսորի և Մա-
գիստրոսի աստիճան ստանալու, երբ ներքին
գործոց նախարարութեան մէջ պաշտօնի կոչ-
ուեցաւ, յետոյ անցաւ հանրային կրթու-
թեան պաշտօնարանը, ուր տարուէ տարի յա-
ռաջանալով, մինչև խորհրդականութեան
աստիճանը բարձրացաւ, և կրթական նախա-
րարութեան ժողովին անդամ եղաւ, ուրիշ
զանազան պաշտօններ ալ վարելով Ռուսիոյ
հանրային կրթական գործոց վերին վարչու-
թեան մէջ: Դեռ քանի մը ամիս առաջ կա-
տարուեցաւ Պ. Եզեանցի Պետական ծառա-
յութեան մէջ մտնելուն յիշատակը: Քաջ
հայագէտ էր, և հմուտ նախնեաց գրութեան
ներուն, և արեւելեան տարերգութիւնները

խորապէս ուսումնասիրած ըլլալով, կարեւոր
երկերու հեղինակ հանդիսացաւ: Հայ եկե-
ղեցական տարեգրութեանց և Մայր Աթոռոյ
վերաբերեալ վաւերական աղբիւրներէ բխած
հեղինակութիւններ ի լոյս հանեց, օգտուե-
լով Պետական արձանագրութիւններէ ու
տոմարներէ: Ամենայն Հայոց Ս. Հայրա-
պետներուն և ռուս իշխանութեանց միջեւ
փոխանակուած կրօնային ու կրթական լըզ-
թակցութիւններն ու հրովարտականներն ի լոյս
ընծայած է թէ՛ հայերէն և թէ՛ ռուսերէն: Իր
ամէնէն կարեւոր ծառայութիւնն է՝ երկու
բարերարներու Մկրտիչ Սանասարեանցին և
Յովսէփ Իզմիրեանցին խորհրդատուն ու ներ-
շնչողն եղած ըլլալը, որով բարոյական հիմ-
նադիրն է Սանասարեան վարժարանին և Իզ-
միրեանց գրական մրցանակին ու աղջկանց
կրթութեան յատկացեալ նպաստին, որ ամէն
տարի կը տրուի դարձեալ Ազա Իզմիրեանցի
կտակին զօրութեամբ: Սանասարեանց իր
կտակին համար երեք կռակակատար կարգած
էր, Պ. Պ. Կրպտ. Եզեանց, Գէորգ Եւանդու-
եանց և Լեւոն Տիգրանեանց: Ասոնց երեքն
ալ մեռած ըլլալով այժմ, կտակին գործա-
դրման հսկելու հոգը կ'անցնի Կ. Պոլսոյ
Խնամակալութեան, որուն նախագահն է Ս.
Պատրիարք Հայրն և ատենապետը՝ վսեմ.
Գաբրիէլ էֆ. Նորատունկեան:

ՀԱՎԱՆՔՈՒԱԿԱՆ

ՊԱՅՔԱՐԸ

Հաճելի անակնկալի մը առջև կը գտնուինք:

Թաւաշանձեան—Մրցանակին ենթարկուելու համար տակաւին ո'չ մէկ յօդուած ստացած մեր աշխատակիցներէն,—թէն ուրախ ենք ծանուցանելու թէ անոնցմէ շատեր համակերպելով իմրագրութեան հրաւերին՝ խոստացած են գրել,—անդրանիկ գրուածք մը կը ստանանք... օտարազգիէ մը: Կ. Պոլսոյ Revue médico-pharmaceutique ֆըրանսէրէն Հանդէսին Տնօրէն—Խմբագրապետ Պ. Բիէռ Աբէռի, որ ծանօթ է իր գիտական բժշկական հրատարակութիւններովը, Բերայի եւրոպական թերթերուն մէջ կարդալով այս տեսակ լրագրական հանրօգուտ մրցումի մը հաստատումը, Մասիսի խմբագրութեան զրկած է երկու յօդուած, այնքան համեստօրէն գրուած նամակով մը՝ որքան ձեռնհասօրէն ուսումնասիրած է նիւթը իր կրկին յօդուածներուն մէջ:

Նախ, աւասիկ իր նամակը.—

ՀԱՆԱՅԱՆ, 9 Յունիս 1905

«Առ Պ. Խմբագրապետ Մասիսի

«Յարգելի պաշտօնակից,

«Ներեցէք որ իմ սքանչացումս միացնեմ բոլոր այն լրագրապետներուն, իմ պաշտօնակիցներուն, տածած սքանչացմանը Պ. Թաւաշանձեանի նկատմամբ,—այն բարեգործ անձնաւորութեան որ պայծար մը կը ստանձնէ ալքոլամոլութեան դէմ, աղէտ մը որ այնքան աւերներ կը գործէ անշուշտ հայ հասարակութեան մէջ ալ, ինչպէս ամենուրեք:

«Ես կը կարծեմ թէ իւրաքանչիւր անհատի պարտականութիւնն է, իր կարողութեան չափով մասնակցիլ այս մարդասէրին տեսութեանց արդիւնաւորմանը: Ասոր համար է որ համարձակութիւնը կ'առնեմ ներփակեալ զրկել ձեզ երկու հակիրճ ուսումնասիրութիւններ

գորս խմբագրելի այս նպատակով, փափաքելով մասնակցիլ բացուած մրցումին: Դժբաղդաբար, հայերէն լեզուն չգիտնալուս, անհունապէս երախտապարտ պիտի մնամ ձեզ՝ եթէ հաճիք հայերէնի թարգմանել տալ իմ համեստ գրուածքներս որպէսզի կարենան հրատարակուիլ, եթէ արժան դատէք, ձեր պատուական Հանդէսին մէջ:

«Ընդունեցէք եւպյլն:

(Ստորագր) Բիէռ Աբէռի

Յարգելի նամակագիրը չափազանց համեստ կերպով կը ներկայանայ՝ աւարակոյսի տակ ձգելով իր գրուածքներուն հրատարակելի հանգամանքն ու արժէքը: Մասիսի խմբագրութիւնը սիրայօժար կընդունի Պ. Աբէռի այս պատահական աշխատակցութիւնը նիւթի մը վրայ որուն կատարեալ ձեռնհասութիւնը ունի իր բազմադիմի ուսումնասիրութիւններովը:

ԽՄԲԱԳՐ. «ՄԱՍԻՍ»Ի

ԱՌԱՋԻՆ ՅՕԴՈՒՄՆ

Ալքոլամոլութիւնը աղէտ մըն է որ աւերներ կը գործէ, մարդկային ընկերութիւնը, ազգը, սերունդը կը փճացնէ: Իր նիւանները բազմատեսակ են, բայց գիտութիւնը կրնայ դիւրաւ դէմ դնել անոր: Աստուծմէ չի դար անիկա, այլ մարդոց ստեղծածն է, սկզբնապատճառ ունենալով մոլութիւնը:

Բարոյական ու բժշկական գիտութիւնները ամէն ժամանակ յաղթած են մոլութեան, հետեւաբար դարմանելի աղէտի մը վրայ է խնդիրը:

Ի սկզբան, մարդս գոհ չէր իր տրամադրութեան ներքև միակ ըմպելի մը ունենալով. ուստի ջանաց ընտելեան բոլոր արտադրութիւնները գործածել, զանոնք ալքոլական ըմպելիքներու վերածելու համար: Եւ ասիկայ տեղի ունեցաւ այն երկիրներուն մէջ մանաւանդ ուր այդին չէր հասնել: Հետեւաբար, խմորուած ըմպելիքները պատրաստ

տուած են ամէն ժամանակ և ամէն ժողովուրդներու մէջ, նոյն իսկ ամէնէն նախնականներուն և ամէնէն վայրենիներուն մէջ: Պիլինոս կը թուէ տառնարկու տեսակ ալքոլական ըմպելիքներ: Իրմէ հաղար ութնարիւր տարի ետքը, Բաօլօ Մօնդէկաձձա կը յիշատակէ մօտաւորապէս հարիւր-վաթսուն զանազան ըմպելիքներ: Եւ, այս թիւին մէջ չեն, ալքոլը, օղին և կարգ մը խմելիքներ որոնց երկար ցուցակը կը ներկայէ:

Այսօր, ալքոլական ըմպելիքները անհուն պէսպիսութիւն մը ունին և անոնց տեսակը անհաշուելի է:

Զիկայ ցաւ մը, տառապանք մը որուն չենթարկուի ալքոլամոլը: Եթէ աչքէ անցունենք այն խանգարումները զորս կը պատճառեն ալքոլական ըմպելիքներու բաղադրութեան մէջ ներմուծուած տարրերը, ալքոլամոլին քաջած հիւանդութիւններն ու ցաւերը աւելի՛ բազմապատկուած և աւելի՛ ահռելի կ'ըլլան:

Ալքոլամոլութիւնը կը յիշատէ միանգամայն ընտանիքին, սերունդին, համայնքին: Եթէ ալքոլամոլը թշուառ ու տառապաղին կեանք մը անցունէր միայն, եթէ յիմարանոցի մը կամ հիւանդանոցի մը մէջ մեռնէր կամ անձնասպան ըլլար, աղէտը այնքան մեծ չպիտի նկատէինք: Բայց չարիքը հօտ կանգ չառնէր: Նախ, և յաճախադէպ կերպով, ալքոլամոլը եղեռնագործ կը դառնայ, գող կ'ըլլայ, մարդասպան կ'ըլլայ. յետոյ, յիշատէ կը հասցնէ իր ընտանիքին, կնոջը, զաւակներուն, դառնութեամբ կը համակէ անոնց կեանքը և կը պատահի իսկ որ անոնց կեանքը խլէ: Սերնդականութեան տեսակէտով, ալքոլամոլութեան հետեւանքները չա՛տ աւելի վտանգաւոր են. արեւոյդներու դաւ կընեքէն ոմանք ապուշ կ'ըլլան, ուրիշներ մօտաւորական տկարութեան նշաններ կը կրեն, բարոյական վատթարացումով մը որ ընկերային ստորին խաւերուն վրայ կը նետէ զանոնք. անոնց մէջ պղտիկ թիւ մը չեն կաղմբի նաև լուսնոտներ, խուլ—համբեր, խոլաւորներ, ջղագարներ և այլն:

Պէտք եղածին չափ ուշադրութիւն չենք

դարձուններ մանուկներուն ալքոլամոլութեան վրայ. կը խնդանք, կը շատանանք ուսերնիս թոթուելով: Եւ սակայն Տօքթ. Պառաթիէ կը հաւաստէ մեզ թէ մեծապէս կը սխալինք այդպէս շարժելով:—«Եթէ ալքոլամոլութիւնը գոյութիւն չունի, ուրեմն ի՞նչ անծանօթ պատճառի հետեւանքով է որ դարուս տղաքներուն մօտաւորականութիւնը այնքան ակտիւ կերպով կը շեղի ուղիղ ճամբէն: Ի՞նչ բացորոշ շարժառիթ կայ անոնց բնաղբները դէպի չարը մղելու և անոնց մատաղ ուղիղը յոռի դաղափարներով տողորելու համար»:

Յետոյ, եթէ նկատողութեան առնենք սերունդը, պիտի կրնանք հաստատել թէ ալքոլամոլութիւնը գլխաւոր պատճառներէն մէկն է համայնքի մը պակսելուն և անկմանը:

Արդ, ո՞րն է այն աղէտը որ կրնայ հաւասարիլ ալքոլամոլութեան առաջ բերած յիւսմաներուն:

Արեւոյդները երեք դասակարգի կրնան բաժնուիլ.—մոլիները, արհեստով խմողները և կանոնաւոր խմողները, թէև շատ մը պարագաներու մէջ բոլորովին տեսական է այս բաժանումը: Մոլիները անոնք են որոնք գինովութեան պատճառած բիրտ հաճոյքին համար միայն կը խմեն: Արհեստով կամ արհեստի բերամբ խմողները կը մղուին կարգ մը պայմանադրական պարտաւորութիւններու հետեւանքով: Գործեր կան, սակարկութիւններ, առուտուրներ, որոնք գինետան մէջ կը կարգադրուին և յաճախ գինեպաններն իրենք ալ կը հարկադրուին յաճախորդներուն հետ բաժակ պարպել՝ զրգիւ ըլլալու համար: Մեքենագործները, հնոցպանները, երկաթի ու կրակի հետ աշխատող գործաւորները իրենք ալ զոհերն են «արհեստին, որ արեւոյթիւն կը պահանջէ»: Կաղուրիչ ըմպելիքները, ապսէնթ մանաւանդ, այդ վերջին դասակարգին մէջ աղետալի աւերումներ կը գործեն և ծանր հարկ մը վճարել կուտան անոնց՝ թոքախտին, վասնզի՝ ինչպէս ըսած է Հայէմ՝ «յաճախ գինետան սեղանին վրայ կըստացուի թոքախտը»:

Երրորդ դասակարգը կը կազմեն, ինչպէս ըսինք, կանոնաւոր խմողները, անոնք որ

առողջական պատրուակով և իբր թէ կաղ-
դուրուելու համար կը խմեն, չափաւոր քա-
նակութեամբ, գինի և իֆսիք՝ թիչ չատ բժշ-
կականապէս պատրաստուած, բայց միշտ ալ-
քովով խառն, որոնք՝ իրենց յաւակնոտ են-
թադրութեան հակառակ՝ աւելի յիստակար
են քան օգտակար:

Արբենալու այս զանազան եղանակներուն
ամէնուն ալ հետեւանքը կ'ըլլայ՝ ի ծնէ ա-
ռողջ կազմուածքի մը մէջ փոփոխութիւն-
ներ առաջ բերել մարմնական գործարաննե-
րու, մանաւանդ շնչառութեան վրայ, որոնք
ընդունակ կը դառնան թոքախտէ վարակ-
ուելու:

Սա ճշմարիտ է թէ գինին և գարեջուրը
նուազ զոհեր կ'ունենան, ոչ միայն անոր
համար որ զանոնք գործածողները չափը չեն
անցուներ այլ մանաւանդ անոր համար որ
այդ ըմպելիքները չատ ալքով չեն պարու-
նակեր: Նոյնը չէ սակայն միւս ոգելից ըմ-
պելիքներուն համար, մանաւորապէս օղին,
քօնեաքը և ամբողջ շարքը «կաղդուրիչ»նե-
րուն՝ վէրմուտ, ամէր, և այլն:

Այս ոգելից ըմպելիքներն են ահա որոնք
ամէն օր կը թունաւորեն մարդկութիւնը,
վասն զի՝ կը կրկնենք՝ իրենց պարունակած
խառնուրդ ալքովէն զատ, կը պարունակեն
տեսակ տեսակ հիւթեր, մէկը միւսէն աւելի
թունաւոր, և այս բոլոր մկնաճգտական և
թմրեցուցիչ թոյները՝ կեանքը կարճեցնելով
արբեցողը յաճախ հիւանդանոց կամ յիմա-
րանոց երթալու կը հարկադրեն: Այս խմե-
լիքները աւելի աղետալի դարձնող պարա-
գան սա է թէ, մեծագոյն մասամբ խարդախ-
ուած են: Եւ արդարեւ, անձնական խուզար-
կութիւններ ու տարրալուծումներ զորս կա-
տարած եմ այստեղ սպառուող կարգ մը խը-
մելիքներու վրայ, ապացուցած են ինձ թէ
խարդախեալներուն թիւը չա՛տ աւելի է քան
հարադատներունը:

Ուստի պէտք է հակազդել, և հնար ե-
ղածին չափ շուտ: Առանց վայրկեան մը
կորսնցնելու պէտք է սկսիլ հակալքուական
նուիրական պայքարին, գէթ փրկելու համար
շանոնք զորս ալքովը չէ գգնաւոր տակա-

ւին: Փրկենք մանաւանդ մանկութիւնը:
«Ալքովամոլութեան սահմաններն առ յաւէտ
գլել անցնելէ առաջ, մարդս պէտք է գիտ-
նայ թէ տակաւին կրնայ բժշկուիլ, կրնայ
բարելաւել իր վիճակը. էականը կը կայանայ
ալքովամոլը յուսադրելուն մէջ թէ անհնար չէ
իր վերադարձը դէպի ուղիղ ճամբան և ա-
սոր համար իրեն հայթայթելու է հարկ եղած
ֆիզիքական ու բարոյական միջոցները, որ-
պէս զի կարենայ հրաժարիլ իր դեգերանք-
ներէն. հարկ է ցոյց տալ իրեն՝ ամէն վայր-
կեան իր ոտքերուն տակ բացուած անդունդը,
խել զինքը ալքովին յարումէն, միշտ և ա-
մէն ժամանակ ներշնչելով առողջ գաղա-
փարներ ու փրկարար օրինակներ: Խօսքի,
գրիչի, տեսնուածներու ազդեցութեամբ,
պէտք է հեռացնել զինքը իր մոլութենէն
որուն գերին եղած է. և այդ մարդը, որ
արբեցողութեան հակում ունի կամ արբեցող
ծնողաց զաւակ է, եթէ համոզուի թէ ինչ
պիտի ըլլայ իր վախճանը, եթէ նախադէպ
իրեն սպառնացող վտանգը, կրնայ տակաւին
վերադառնալ կանոնաւոր վիճակի մը և ա-
զատիլ ալքովով թունաւորուելէ»:

Երէկուան ալքովամոլին, ինչպէս վաղ-
ուան ալքովամոլին՝ փրկութեան յենարան-
ներ պէտք են: Եւ այդ յենարաններն ուրիշ
բան չեն կրնար ըլլալ, բայց եթէ վերը յիշ-
ուած միջոցները՝ գրիչով, խօսքով մաքառե-
լու, համոզելու որ ետ կենան իրենց այդ
մոլութենէն:

«Ալքովը եղեռնագործութեան ու խելա-
գարութեան կը տանի մարդը. բանտին ու
հիւանդանոցին ճամբան է» ըսած է տեղ մը
Տօքթ. Մոնէն: Պիտի աւելցնեմ թէ ընտա-
նիքին կործանումն է, սերունդին փճացումը
և մեծագոյն աղէտը մարդկային ազգին
համար:

ԲԻԷՌ ԱԲԷՌԻ

Բերա



ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Բ.

ԴՊՐՈՑԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Առաջին դասին մէջ Մանկավարժը Դպրոցական Առողջապահութեան իբրեւ հիմ, իբրեւ խարխիս ներկայացունելով, դուք տեսաք որ դպրոցի մը առողջապահութեան վերաբերեալ գրեթէ բոլոր կէտերը չօշափեցի, և հարեւանցի մը յիշեցի նաեւ այն հիւանդութիւնները, որոնք կրնային յառաջ գալ դպրոցի մը հակառողջական վիճակէն, որուն մասին անտարբեր մնալը, այսօր, բժշկական վարդապետութիւններու վճռով, ոճիր կը համարուի:

Այս երկրորդ դասովս կ'ուզեմ խօսիլ դպրոցական հիւանդութիւններու վրայ, համառօտ մը բացատրելով անոնց սկզբնաւորութեան պատճառները, և ցուցնելով անոնց գործած աւերները, որպէս զի՝ աւելի ևս հոգածու ըլլանք մեր դպրոցներուն առողջապահութեանը, որպէս զի՝ աւելի մեծ կարեւորութեամբ հսկենք մեր աշակերտներուն մտային ու մարմնային առողջութեանը:

Դպրոցի հիւանդութիւնները բազմաթիւ են. ամատարանութեան հատորներու պարունակած գրեթէ բոլոր հիւանդութիւնները կրնան հոն պատահիլ. կան՝ որ նոյն իսկ դպրոցին մէջ ծնունդ կ'առնեն, կան՝ որ դուրսէն հոն կը փոխադրուին, և այս երկու դասակարգի հիւանդութիւններուն միջեւ որոշ սահման մը գծել անկարելի է:

Դպրոցի մէջ ծնունդ առած հիւանդութիւններն են՝ աչքի ցաւեր, կարճատեսութիւն, խլութիւն, ուղեղի ծանրութիւն, գլխի ցաւ, քթի արիւն, ողնայարի ծռութիւն, կոկորդի ցաւ, ականջի ցաւ, կուրծքի բորբոքումներ, ստամոքսի խանգարումներ, լորձնաբորբ, անարիւնութիւն, գլխութիւն, ջղային տկարութիւններ, վիրաւորութիւններ և այլն:

Իսկ դուրսէն փոխադրուածներն են.

Կեղծամաշկ, բամբակիկ, ոջիլ, էնֆլիւէնցա, բոր, կապուտահղ, օձիկ, ծաղիկ, ծաղկիկ, հարսանիթ, կարմրուկ, և տեսակ տեսակ մորթի հիւանդութիւններ: Աղգ. վարժարաններու մէջ հաղուադէպ չեն այս հիւանդութիւնները. 1886էն ի վեր՝ թաղային մէկ երկու դպրոցներու առողջապահութեանը մօտէն հսկելու առիթ ունեցած ըլլալովս՝ տեսած եմ յիշատակած հիւանդութիւններուս ամէնն ալ, որոնց մասին դժբաղդաբար չեմ կոչած երեք ունեւնալ օրինաւոր վիճակադրութիւն, ինչ որ մեր դասին շատ կարեւոր կ'ըլլար այսօր:

Դպրոցական հիւանդութիւններու պատճառ համարուած է գլխաւորապէս երեք բան. նախ՝ աշակերտներուն նստողականութիւնը, յետոյ անոնց ուղեղին բազմաշխատութիւնը և չափազանց յոգնածութիւնը, և նաեւ վարժարանին անմաքրութիւնը: Այս երեք պատճառներու մասին 1874էն ի վեր սաստիկ բռն զոքարկու եղած են նշանաւոր բժիշկներ, Յրանսայի մէջ Առնու, Տալլի, Շուէտի մէջ Աքսել Դէյ. Բրուսիայի մէջ Դօն և Ֆինքէլն-պիւրկ, ինչպէս նաեւ Լանեօ, Ֆէռէօլ, Ժաւալ, Հառտի, Պառաուտէլ, Ժիւլ Ռօշա, Պօմէճ, Բէթէռ, Կառիէլ և ուրիշներ, որոնք 1886 եւ 1887 թուականներուն, Բարիդի բժշկական Ակադէմիին մէջ խիստ կարեւոր եւ տաք վիճաբանութիւն մը յարուցին այս մասին, եւ յաջողեցան մեծամեծ բարեփոխութիւններ մուծանել կրթական ծրագիրներու մէջ, եւ առողջապահական կենսաւէտ բարեկարգութիւններու հայր ըլլալ դպրոցական կեանքի մէջ:

Եւրոպացի առողջաբաններու կարծիքով, դպրոցական հիւանդութիւններու գլխաւորն է աչքի ցաւը եւ կարճատեսութիւնը (myopia). առաջին անգամ անգլիացի Ուէր բժիշկը, 1813ին, ուշադրութեան առարկայ ըրաւ դպրոցական աշակերտներու տեսողութեան հիւանդ վիճակը. բայց աւելի՝ Բրեսլաւցի Հերման Դօն բժիշկն եղաւ, որ քսան տարի շարունակ այս մասին մանրակրկիտ հետ

տաղափութիւններ կատարելով՝ յայտնի ըրաւ որ՝ դպրոցը կարճատեսութեան դործարան մըն է պարզապէս, 30,000 է աւելի աշակերտներու աչքերը քննեց եւ տեսաւ որ անոնցմէ հարիւրին 15ը եւ աւելին, արդէն իսկ սկսած էին կամ կը սկսէին կարճատես ըլլալ: Կարճատեսութեան պատճառն է, ըստ Գօնի, վարժարանին մէջ մտնող լոյսին անյարմարութիւնը, աշակերտներուն յոռի եւ չափազանց մտադրադուլթիւնները, դասագիրքներուն փոքրատառ եւ աչքի յոգնեցուն թիւ ըլլալը, գրասեղաններուն ու նստարաններուն անկանոն ու տձեւ շինուածքը, եւ աշակերտներուն անբնական նիստ ու կացը: Չգիտեմ թէ մեր մէջ որչափ է կարճատես եղող կամ կարճատեսութեան ... պատրաստուող աշակերտներուն թիւը. սաչափ միայն կրնամ ըսել որ, եթէ օր մը յանկարծ ակնաբուսի մը հետ թաղային որ եւ է վարժարանի աշակերտները քննելու ելլենք, շատ հաւանական է որ անոնցմէ հարիւրին քսանըհինգը գտնենք ենթակայ կարճատեսութեան կամ ուրիշ տեսակ աչքի տկարութիւններու, եւ ինչո՞ւ չգտնենք այդ թիւը, քանի որ Գօնի նշանակած պատճառները մեր դպրոցներուն մէջ, ա՛լ աւելի դոյութիւն ունին. քանի որ մեր դպրոցներու լոյսը, գրասեղանները, նստարանները, դասերը, դասագիրքերը, եւայլն եւ այլն, տակաւին առողջապահական չեն. այո՛, մեր աշակերտներուն աչքերն ալ ցաւոտ պէտք է ըլլան եւ կարճատես, եւ տեսէ՛ք թէ ինչպէս կը սկսի աչքի մը կարճատեսութիւնը:

Աշակերտը միջնադ սրահի մը մէջ, անկանոն նստարանի եւ անյարմար գրասեղանի առջեւ նստած արդէն, եթէ ունի փոքրատառ դասագիրք մը, ստիպուած է զայն իր աչքերուն շատ մօտիկ բռնել, կամ իր աչքերն անոր մօտեցնել, որոշապէս կարենալ կարդալու համար. այս պարագային, աշակերտին աչքի բիւրը պէտք է որ իրարու մօտենան, որպէս զի՝ տեսութեան պարզագոյն կեդրոնին համեմատ լարուին եւ յարմարուին. բիւրերու այս մերձեցումը տեղի կ'ունենայ աչքի մկաններու միջոցաւ, որոնք

կ'ամփոփուին, կը կծկին, եւ իրենց կծկուելովը կը ճնշեն աչագնդիկները (globes oculaires). — Եթէ այդ ճնշումն ստեպ եւ երկար տեւէ, յայտնի է որ կը վնասէ աչագնդիկներուն, անոնց հորիզոնական մեծ առանցքը կ'երկարէ, գնդիկներուն ձուաձեւ վիճակ մը կուտայ. տեսութեան պարզագոյն կեդրոնը կը բերէ աչքի սարգոսեմին (rétine) եւ սառնեմին (cristallin) միջեւ. կը յորինէ կարճատեսութիւնը. կարճատեսութիւնը ո՛չ այլ ինչ է, ուրեմն, բայց եթէ՝ խախտիլն ու յառաջանալը տեսութեան պարզագոյն կեդրոնին(*), որ բնական ըլլալու համար, հարկ է որ ճիշդ ու ճիշդ աչքի սարգոսեմինին վրայ իյնայ: այս՝ առաջին պատճառ. երկրորդ՝ աշակերտը կարդացած ժամանակը իր անկանոն նստարանին և գրասեղանին բերմամբ՝ ստիպուած ըլլալով գլուխն առաջ բերել, վար կախել, այդ պահուն՝ վիզին երակները բաւականին կը սեղմուին, որով գլուխն ելլող արիւնը այդ պատճառաւ չկըրնալով ազատ դարձ ունենալ դէպ ի կուրծք՝ ուժով կը ծաւալի ուղեղին, երեսին, ինչպէս նաեւ աչքերուն մէջ, ուր բնականաբար սովորականէն աւելի արիւն կը գոյանայ և առաջ կուգան նորանոր ճնշումներ, որոնք միանալով նախորդ մկանային ճնշումներուն, կ'աղդեն աչագնդիկներուն հեղուկ մասին, ապիկեմին (humeur vitre), զայն դէպի ետ կը հրեն, դէպի ետ կը մղեն, որով կ'երկարեն դարձեալ աչագնդիկներուն հորիզոնական մեծ առանցքը, հետեւանք՝ կարճատեսութիւն: Աչքերու այս վիճակին վրայ աւելցուցէ՛ք վարժարանին ազօտ լոյսը, նաեւ օդին ապականութիւնը, կոյանոցներու գարշահոտութեան վատ ազդեցութիւնը, և ահա կ'ունենանք կուպերու, թարթիչներու, արտօսարագեղձի բորբոքումներ, որոնցմէ դպրոցի մանուկները ազատ պահելու համար է որ առողջապահները կ'ուզեն զի վարժարանին լոյսն ըլլայ պայծառ, իյնայ աշակերտին

(*) Կարճատեսութեան հակառակն է հեռատեսութիւնը (hypermétropie), որուն մէջ տեսութեան պարզագոյն կեդրոնը կ'աճնի սարգոսեմինին ետեւը:

ձախ կողմը, նստաբաններն ու գրասեղաններն առողջապահական օրէնքով շինուած ըլլան, աշակերտները նստին միշտ ուղիղ և իրարմէ բաւական հեռու, որպէս զի մէկին ստուերը միւսին լոյսը չ'արգելէ, դասագիրքերն ըլլան խոշոր տառերով, վարժարանին միջնորդաւ միշտ թարմ օգուվ լեցուն ըլլայ, վերջապէս կոյանոցներն ըլլան շարունակ մաքուր և հականեխուած, որպէս զի վարժարանին չորսդէին չտարածեն աւշակի (ammoniaque) անտանելի հոտ, ինչ որ տղոց աչքերը կ'արցունքոտէ և հիւանդ կ'ընէ: Առողջապահներուն այս յանձնարարութիւնները պիտի կատարուին մեր դպրոցներուն մէջ, չեմ կարծեր. ես գիտեմ որ անոնք «ձայն բարբառոյ յանապատի» պիտի ըլլան, և պիտի մնան հոս միայն. բայց խղճի պարտք մըն է ըսել, կրկնել զանոնք, զգացնել միշտ կարեւորը, ըսել և դարձեալ ըսել, անշուշտ ըսուածն օր մըն ալ կ'ըլլայ կատարուած: Բարեբաղդաբար, վարժարանի մէջ յառաջ եկած աչքի ցաւերը, կարճատեսութիւնը շուտով կարելի է անհետացնել, եթէ պէտք եղած բժշկական դարմանները կանուխէն չ'ըլլացուն:

Աչքի ցաւերու և կարճատեսութեան չափ յաճախաբէս է տեսնալ նաև խուլքիւնք: Ասոր պատճառը՝ թէև երբեմն դաստիարակին ապտակահարութիւնները, բայց շատ անգամ ականջի, կոկորդի անտես մնացած հիւանդութիւն մըն է, և մանաւանդ՝ քթափողի ետեւի կողմը, յետունչին (arrière fosse-nasale) մէջ գեղձատիպ մամուլներու գոյութիւնը: Այս մամուլները տակաւ խոչորնալով, տղոց ներքին ականջը կը խցեն, լսողութիւնը կը խանգարեն. քիթը գոցելով չունչի ազատ մուտքը կ'արգելեն. տղան կը սկսի բերանը բաց չնչել, ուրկէ յառաջ կուգան կոկորդային, կրծային տեսակ տեսակ հիւանդութիւններ. երբեմն անոնց արտասանութիւնը, խօսքերու արտաբերութիւնն իսկ կը տկարանայ. այդ մամուլներու պատճառաւ անոնք թլուտաւ կ'ըլլան և իրենցմէ անբաժան կ'ըլլայ միշտ ջղագրգռութիւնը, փը-

թամտութիւնը, ապուշութիւնը, դասերու անտարբերութիւն և անուշադրութիւն, որուն համար անիրաւ կերպով շարունակ անմիտ պատիժներու կ'ենթարկուին, դասատուին վատ զրկանքներուն ծանակ կ'ըլլան. մինչ կոկորդի և քիթ մասնագէտ բժիշկ մը փոքրիկ և անմեղ գործողութեամբ մը, շուտով վերջ պիտի դնէր անոնց այդ տխուր վիճակին:

Այս հիւանդութիւններուն հետ վարժարաններու մէջ սովորական է՝ ուղեղային ծանրութիւնը և ասոր արդիւնքն եղող գլխացաւը, կիսագլխացաւը, (migraine), քիթ արիւնը, որոնց պատճառն է՝ անյարմար նստարաններու վրայ, ապականալ օդի մէջ աշակերտներուն շարունակական նստողականութիւնը, անոնց մտային աշխատութիւններուն չափազանցութիւնը և նաև՝ ածուխի կրակարանները: Եւրոպացի հեղինակներու վիճակագրութիւններուն համեմատ, ուղեղի ծանրութիւնն հարիւրին յիսուն յաճախաբէս է վարժարանի մէջ. չեմ կարծեր որ մեր մէջ ասկէ պակաս ըլլայ, քանի որ մեր վարժարաններն ալ ազատ չեն ուղեղի ծանրութիւն առթող բազմակերպ պատճառներէ:

Երբ տղայ մը երկար ժամանակ գլուխը կախելով աշխատի, գիտենք որ՝ պարանոցին երակներուն ճնշուելովը, դէպի գլուխն արիւնի ուժգին հոսանք մը կը գոյանայ. այդ վիճակին մէջ, եթէ տղան անյարմար նստարանի վրայ է, աշխատութեանը ժամանակ կը ստիպուի ո'չ միայն գլուխը ծռել, այլ և մէջքը. այս դրութեամբ անոր փորը կը ծալուի, աղիքները կը ճնշուին, կը սկսին նեղել ստոծանը, դանդաղել ասոր կանոնաւոր ելեւէջը, որ ա'յնչափ հարկաւոր է ազատ շնչառութեան համար. ստոծանի նեղուելովը կը դժուարանայ թոքերուն խաղը, կը խանգարի չունչին հանգիստ առը և հանգիստ տուրը, որով ահա դէպի գլուխը տեղի կ'ունենայ շնչերակային արիւնի հոսանք, որուն երակային վերադարձը դէպի կուրծք, դժբաղդարար ազատօրէն չի կատարուիր, արգիւտած ըլլալով արդէն պարանոցի երակներուն ճնշուած վիճակին պատճառաւ. ար-

իւնն հետդհետէ կը խռնի ուրեմն զլուսին մէջ, մանուկին երեսները, այտերը, աչքերը կը սկսին կարմրիլ, ինչ որ յայտարար է ուղեղին ծանրութեան, այսինքն՝ իր կարողութենէն աւելի արիւն ընդունած ըլլալուն։ Դիւրին է մակաբերել որ, այս պարագային, ուղեղը քիչ մը ուռած, խոշորցած բան մը կ'ըլլայ, խելապատուիկն մէջ կը նեղուի, կը ճնշուի, կը յոգնի, ուստի՝ ցաւ կը զգայ։ Ուղեղին այս ծանրաբեռն պահուն, խեղճ մանուկը դասը սերտելու կամ դասը մտիկ ընելու բռնադատուած՝ հետդհետէ անհամբերիլ կը սկսի, անզգալաբար կարճ շունչ առնել մը, տեսակ մը հեւք կ'ունենայ, և անաւ կը հառաչէ, կը յորանջէ, այդու՝ երկար և խորունկ շնչառութիւն մը ընելու, թոքերուն մէջէն պակսած օդն ինքնաբերաբար լեցնելու համար։ Բայց ինչ օգուտ, քանի որ իր մտքին չարատանջ վաստակը կը շարունակէ, քանի որ մարմինը կը պահէ միշտ իր ծալուած դիրքը, և գլուխն իր կախ վիճակը, ուղեղը՝ որ բազմադիմի ջիւղերու միջոցաւ սերտ յարաբերութիւն ունի և կապակցութիւն մարմինին ամէն մէկ մասին հետ, ինչպէս նաև բոլոր գործարաններու հետ, իր ծանրացած վիճակովը կը սկսի շուտ վատազդել ամէն կողմ, և կը պատրաստէ ջղաճըգ-տումներ, ջղային և մկանային ցաւեր, սրտի բարախումներ, որոնցմէ անբաժան է գլխացաւը կամ կիսագլխացաւը՝ անհատնում փրսխումներով, և քթի արիւնը, որոնք կրնան շատ վտանգաւոր հետեւութիւններ ունենալ և առթել՝ ուղեղի, խելապատուիկ բորբոքումներ, տեսակ տեսակ արիւնահոսութիւններ, մտային խանգարումներ, ստամոքսի, սրտի հիւանդութիւններ և այլն։ Այս տխրառիթ և մահառիթ վիճակներէն աչակերտներն ազատ պահելու եւ փրկելու համար է, որ առողջաբան բժիշկներ ձայն բարձրացուցին եւ միահամուռ պահանջեցին որ՝ վարժարաններու ծրագիրները բեռնաւորեալ չըլլան, դասաւանդութիւնները մտքի յոգնեցուցիչ չըլլան, գրասեղանները չինուած ըլլան Ամերիկեան, Անգլիական կամ Շուէտական դրութեամբ, ըլլան Սանտպէրքի, Կունսի,

Լիպուիսի, Լընուառի յորինածներէն, դասատուները խստապահանջ չըլլան, դասերը քիչ և հաճոյական ըլլան, երգեր, պարեր, պըտոյտներ, խաղեր ընդմիջեն շուտ շուտ ամենակերպ դասերը։ աչակերտներն ազատ օդի և արեւի մէջ միշտ ելլեն, որպէս զինեղուին մտքի յոգնածութենէ, սթափին, կազդուրին, և իրենք զիրենք մարմնային այլ և այլ շարժումներու կամ ձայնային կըրթութիւններու տալով, կազդուրեն շուտով իրենց ուղեղին այն հիւանդագին քլիջները, զորոնք երկարատեւ տքնութիւն մը ընկճած, ճնշած էր։

Ուղեղի ծանրութեան չար հետեւանքները տեսած եմ շատ անգամ մեր վարժարաններուն մէջ, և գրեթէ միշտ պատահած եմ մանաւանդ քթի արիւնի, գլխացաւի որոնց հաւասարապէս ենթակայ կ'ըլլան մեր աչակերտներն և ուսիները։ մեծ ուշադրութիւն այս մասին ընել պարտաւոր ենք, կանուխէն դարման հասցընելու համար անոնց։ Գլխացաւն յոգնած ուղեղին յուսահատ ազաղակն է։ քթի արիւնն ուղեղին դառն արցունքն է, որոնցմով անիկա հանգիստ կը պահանջէ, ըսած է 1887ին, Բէթէն՝ ֆրանսացի բժիշկը։ ուղեղի ազաղակներուն անտարբեր չդառնուիք, և ընենք ինչ որ կրնանք մեր աչակերտներուն և ուսիներուն ուղեղը չը յոգնեցընելու համար։ Ուղեղի ծանրութիւնն աւելցնող պատճառ մըն է աչակերտներուն գլուխին գոց նստիլը վարժարանին մէջ, ինչպէս նաև աչակերտուսիներուն կողպատով վարժարան գալը, որոնց, իրենց բոլոր ուժով, հակառակելու են մանկավարժ և մանկավարժուհի։

ՏՈՔԹ. ՎԱՀՐԱՄ ԹՈՐԳՈՍԵԱՆ

(Շարունակելի)



ՅՐՏՈՒՄ ԼԱՐԵՐ

Ա.

Դալկահոս լոյսի մը փափկութեան տակ,
—Երբ ծովը անդին կուլայ տըղու պէս—
Ես կը նըլմարեմ ձեռք մը ըսպիտակ,
Կը մըսի հոգիս զերթ շուշան մը վէս...

Երբ ծովը անդին կուլայ տըղու պէս
Անհուն մահերգի մը սեւութեան մէջ,
Երազ մը կ'անցնի յոգնած իմ ճակտէս՝
Թողլով հոն ցաւի այրուցք մը անվերջ.

Ես կը նըլմարեմ ձեռք մը ըսպիտակ
Որ կը գուրգուրայ դաշնակի վըրայ.
Ու ձեռքը փափուկ է, մինչ եղանակն
Աւետիկ մը պէս մերթ կը սարսըռայ:

Կը մըսի հոգիս զերթ շուշան մը վէս
Երբ ձեռքին տակ կոյս սէրեր կը ծաղկին,
Ու ինձ կը թըրի թէ ձայն մը քովէս
Ան ալ կը մըսի, ինչպէս իմ հոգին...

* *

Յաւ մը կը սողայ ճակտիս եղերքէն
Երբ դաշնակի սիրտ մ'առնէ ելեւէջ,
Ու երբ տըրտմանոյ հոգիներն երգեն՝
Կը փըթթի անհուն համբոյր մ'հոգւոյս մէջ...

Երբ դաշնակի սիրտ մ'առնէ ելեւէջ
Աշխոյժ մառնեցող գիրք հըպումին տակ,
Օհ ես կը սիրեմ ծըփանքն այն անվերջ
Ուր լո՛ւռ կը թաղուի մեր սիրտն ըսպիտակ...

Ու երբ տըրտմանոյ հոգիներ երգեն
Մեռած սէրերու յիշատակն աղւոր՝
—Ուր կը բաժնուէր մեր սիրտն իր վէրքէն
Եւ ուր կը ժըպտէր կեանք մը լուսաւոր—

Կը փըթթի անհուն համբոյր մ'հոգւոյս մէջ,
Խընկաւէտ համբոյր մը լուռ ու երկար
Դէպ այն ըղձանոյն, արշալոյս մը պերճ
Ձոր ինձմէ՛ գատ, օհ, մա'րդ չի հասկընար...

Բ.

Մըտամիտի կ'անցնիմ սա ճամբուն մէջէն
—Երբ երազներուս հետ կուլամ լըռիկ—
Հոս ծաղիկներն են որ զիս կը պըճնեն
Խոնարհած իրենց ճակատը տըխրիկ:

Երբ երազներուս հետ կուլամ լըռիկ
—Յիշատակներու այն փունջին վըրայ
Ուր երկուքնիս ալ համբոյրնէ՛ր դըրինք,
Ինչպէս մոռցըւած մ'իւր Սէրը կուլայ,—

Հոս ծաղիկներն են որ զիս կը պըճնեն
Երբ սա պարտէղէն կ'անցնիմ մըտամիտի.
Ձէ՛, անոնք չունին, չունի՛ն մեր փունջէն
Որուն սիրտն է Սէր ու հոգին՝ ըՍփոփ...

Խոնարհած իրենց ճակատը տըխրիկ,
Երբոր ես կ'անցնիմ, այդ ցընցող պահուն
Ինձ կ'ըսեն. «Մեր կեանքն է վաղամեռիկ»:
Օհ, ինչո՞ւ չըլլայ ծաղկին կեանքն՝ անհո՛ւս...

Մ. ՌԵՂՈՒՐԼԵԱՆ

ԾԻԼԼԵՐԻ ՀԱՐԻԻՐԱՍԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ

Կէթէի յայտնութիւններուն հետեւելով
կարելի էր վերյօրինել Ծիլլէրի կենդանագիր
մը, աւելի նմանատիպ ու աւելի նրբաճաշակ՝
քան թէ չադ մը անինքնատիպ կենսագրու-
թիւնները, որոնց հեղինակներն անոր մասին
խանդավառ ոճ մը միայն կը գործածեն: Տա-
ղանդի, նոյն իսկ նկարագրի թերութիւններն
այս նորանշան կենդանագրին մէջ սաւա-
կ'երեւին, իրր թէ աւելի ճշմարտելու համար
նկարը, առանց սակայն տկարացնելու այն
համակրանքը զոր մեզի կը ներշնչէ ա՛յնչափ
սիրարնոյթ հանճար մը:

Թանձրապաշտութեան (Fetichisme) բնաւ
հետք չկայ այն անկեղծ աղապատանքին մէջ՝
զոր կէթէ կը տածէր իր բարեկամի մասին.
ամէն մարդէ աւելի զայն սիրելով ու յար-
գելով հանդերձ, բնաւ չհրաժարիր զայն դա-
տելու աղատութենէն, կը տեսնէ անոր ան-
կատարութիւնը, բայց անոնցմէ բնաւ չօգ-

տուր՝ Շիլլէրի վնասով ինքնապարծ ըլլալու համար, այլ զանոնք չշիտելու չափ յստակատեսութենէ ու անոնց մասին բան մը չըսելու չափ անկեղծութենէ զուրկ չէ :

«Շատ տխուր է, կ'ըսէ կէթէ, զոր օրինակ, տեսնել այնչափ չնաշխարհիկ բարեմասնութիւններով օժտուած մարդ մը, որ ինքզինքը կը չարչրկէ իմաստասիրական այնպիսի դրութիւններով՝ որոնք չէին կրնար բնաւ պիտանի ըլլալ անոր... : Իմաստասիրական օգտախնդրութիւնը, կ'աւելցնէր կէթէ, առ հասարակ գէշ է Գերմաններուն համար. այս բանը յաճախ վերացական, աղօտ, թոյլ ու ճապաղ կը դարձնէ անոնց ոճը : Որչափ աւելի բոլորանուէր անձնատուր ըլլան փիլիսոփայական այս այլադան դպրոցներուն, նոյնչափ աւելի գէշ կը գրեն : Ընդհակառակը ամէնէն լաւ գրող Գերմաններն անոնք են, որ, իբր գործի մարդեր, իբր կենցաղագէտ մարդեր, միայն գործնական գաղափարները կը ճանչնան : Այսպէս է որ Շիլլէրի ոճը կը ստանայ համակ իր գեղեցկութիւնն ու համակ իր ազդեութիւնը, երբ ա'լ չի փիլիսոփայեր... :

Փիլիսոփայութիւնը չէր Շիլլէրի միակ թշնամին : Կէթէ որ անոր օգնած էր Վալթերսթայնի նիւթին տիրելու, ճշդօրէն դիտել կուտար թէ պատմական դեռ շատ ու շատ ատաղձներ զանց առնուած էին, ու անոր ջղուտ բացատրութիւնով, իր բարեկամը կարծես թէ կը նեղուէր «ծայրայեղ պատմաբանութենէ» :

Շիլլէրի նկարագրին ինչ ինչ տկար կողմերուն, ինչպէս և անոր տաղանդին թափեցումներուն իսկական պատճառն էր հիւանդութիւնը :

«Երբոր անոր հետ ծանօթացայ, կ'ըսէ կէթէ, կարծեցի թէ չորս շաբաթ միայն կըրնայ ապրիլ :»

Ասկէ կը մակարերուի թէ անոր միտքը բացարձակապէս հանդարտ չէր, այլ մշտնջենապէս յուզումնալից վիճակ մը ունէր, մասնաւորապէս որ կէթէ կը յարէ :

«Ան բնաւ հանգիստ չունէր, ու երբեք չէր կրնար վերջացնել ինչ որ սկսած էր» :

Իրօք, այս երկուքին միջեւ տեղի ունե-

ցած թղթակցութենէն կը տեսնուի թէ կէթէ Շիլլէրի վրայ յաճախ բարոյական բռնադատում բանեցուցած է, որպէս զի այս վերջինը որոշէ աւարտել իր թատերախաղերը : Շիլլէրի գաղափարապաշտութիւնն ու հոգիի ազնուութիւնը ա'լ աւելի նպաստեցին անեցանելու անոր հիւանդոտ վիճակը :

«Անոր ըզձակէտն էր, կ'ըսէ կէթէ, մտքի անկաշկանդութիւն, ու ես կրնամ գրեթէ ըսել որ այս գաղափարը մահացուց զինքը, քանզի այս գաղափարին մղումովը իր ֆիզիքական բնութենէն կ'ուզէր պահանջել ոյժերէն վեր ճիգեր : Երբ Վայմար ժամանեց Շիլլէր, մեծ-դուքսը հազար թալէոի տարեթոշակ մը յատկացուց անոր, ու պատրաստակամութիւն ցոյց տուաւ միանգամայն այս տարեթոշակին կրկնապատիկը վճարել, եթէ երբեք, ու է հիւանդութեան հետեւանօք, հարկադրուէր կասիլ իր աշխատանքին մէջ : Շիլլէր մերժեց այդ վերջին առաջարկը ու երբեք չուզեց յիշեցնել անոր գործադրութիւնը :

«Տաղանդաւոր եմ ես, կ'ըսէր, պէտք է որ կարենամ ինքնաբաւ ըլլալ» : Բայց որովհետեւ իր վերջին տարիներուն մէջ, իր ընտանիքի անդամները կ'աւելնային, ապրելու համար՝ հարկ եղաւ որ տարին երկու թաստերախաղ գրէ. ու այս նպատակին հասնելու համար, աշխատանքի բռնադատեց ինքզինքը, նոյն իսկ այն օրերն ու այն եօթնեակները՝ ուր ճիւղացող էր, հարկ էր որ տաղանդը ամէն ժամ անսար իրեն ու հրաժանները կատարելու պատրաստ գտնուէր : Շիլլէր երբեք չատ չէր խմեր. չատ ժուժկալ էր, բայց իր ֆիզիքական տկարութիւններու վայրկեաններուն մէջ, նկրտեցաւ իր ոյժերը կազդուրելու՝ քիչ մը liqueurով և ուրիշ նոյնատեսակ ոգելից ըմպելիներով : Այս ունակութիւնը ո'չ միայն մաշեցուց անոր առողջութիւնը, այլեւ վնասեց անոր երկասիրութիւններուն : Այս պատճառին կը վերագրեմ ա'յն թերութիւնները՝ զորս գերբնախոր միտքեր կը գտնեն անոր գրուածքին մէջ, Բոլոր այն դրուագները որոնք իբր անճշդ կը քննադատուին, ես պիտի կարենայի ար-

օպթանալիս Իրուագծեք կոչել, քանզի Շիլ-
լէր զանոնք գրած է ա'յնպիսի ատեն մը՝
ուր ինքը զուրկ էր նպատակայարմար ճշմա-
րիտ գաղափարները գտնելու կարողութե-
նէն: Ամենամեծ յարգանք ունիմ բացորոշ
հրամայականի մասին, զիտեմ բոլոր այն օգ-
տաւէտ արդիւնքը՝ զոր սա կրնայ արտադ-
րել. բայց պէտք է չափազանցել զայն,
քանզի մտքի բացարձակ անկաշկանդութեան
այս գաղափարը ա'լ չառաջնորդեր որ և է
լաւ բանի...»:

Ֆիզիքական այս ձախող արամադրու-
թիւնը, աշխատանքի այս զեղծումը, բնա-
կանաբար կը բացայայտեն այն անհամբերու-
թիւնները՝ զորս Շիլլէր չէր կրնար զսպել,
և որոնք երբեմն կը զարմացնէին ու կը
չփոթեցնէին օտարները: Ծանուցուած այ-
ցելութիւն մը յաճախ տհաճութիւն կը պատ-
ճառէր անոր. որոշ ժամուն կը սպասէր տա-
ժանելի սրտայուզումով մը: Անակնկալ հիւր
մը մերթ անդիմադրելի դեգութեան նոպայ
մը կը բերէր անոր վրայ:

«Օր մը, կէթէ կը պատմէր Կրիւնըրի, երբ
Շիլլէրի տունը կը գտնուէի, դուռը զար-
նուեցաւ: Շիլլէր ցատկեց, բացաւ դուռը:
Այցելուն, Պէրլինցի շատ չնորհադէմ երի-
տասարդ վիրաբոյժ մըն էր, որ անոր հար-
ցուց թէ կրնա՞ր վայելել հուշակաւոր Շիլ-
լէրէն ընդունուելու մեծ պատիւն ու հաճոյքը:
Շիլլէր անոր պատասխանեց խստորէն.—

«Ես եմ Շիլլէրը. այսօր չէք կրնար անոր
հետ խօսիլ...»

Ու, ետ մղելով օտարականը, երեսին
գոցեց դուռը:

Կէթէ դարձեալ սրտմտօրէն զիտել կու-
տար թէ նման այն տկարակազմ բնութիւն-
ներուն՝ որոնք կարօտ են աղապատանքի ու
նիւթական խնամքի, Շիլլէր երբեմն շատ կը
հպատակէր կիներու ազդեցութեան:

Եւ սակայն այս դիտողութիւններէն, որ
և է մէկը չէր տկարացնէր ո'չ միայն այն
մեծ յիշատակը՝ զոր կէթէ պահած էր իր
բարեկամին նկատմամբ, ոչ ալ այն բարձր
համարումը՝ զոր կ'ուղէր ներշնչել զայն բնա-

լճանջողներուն: Դիպուածօրէն կարդալով
Շիլլէրի քանի մը խօսքերը, զոր աիկին մը
նօթագրած էր, մինչդեռ Շիլլէր թէյը կ'առ-
նէր անոր տան մէջ, կէթէ կ'ըսէր՝ Եքքէր-
մանի:

— «Հոն, ինչպէս միշտ, Շիլլէր իր վեհօգի
բնութեան լիովին տէր կը թուի. այնչափ
մեծ է թէյի սեղանին առջև՝ որչափ մեծ ե-
ղած պիտի ըլլար Պետական Խորհուրդի մը
մէջ: Ոչինչ կը նեղէ զինքը, ոչինչ կը սեղմէ
զինքը կամ ոչինչ կը վայրաբերէ անոր մտա-
ծումին թռիչքը, անոր մէջ բնակող վսեմ գա-
ղափարները միշտ կը թռչին առանց սեղ-
մումներու, առանց սնամիտ նկատումներու:
Ահա ա'յս պարագային մէջ ճշմարիտ մարդ-
մըն էր, ու ա'յսպէս պէտք էր ըլլալ»:

Եքքէրման կը յիշէր մանաւանդ երեկոյթ
մը, ուր կէթէ, Րիմըրէ գրդուելով, մինչև
մէկ աստիճան խանդավառօրէն խօսած էր
Շիլլէրի մասին:

— «Անոր մարմինին կաղմութիւնը, կ'ըսէր
Րիմըր, փողոցներուն մէջ անոր քալուածքը,
անոր շարժումներէն իւրաքանչիւրը սէգ հան-
գամանք մը ունէր, միայն աչքերը քաղցրա-
հայեաց էին...»

— «Այո՛, ըսաւ կէթէ, անոր վրայ ամէն
բան սիգապանծ ու փառաշուք էր, միայն
աչքերը քաղցրահայեաց էին: Ու իր մար-
մինին նման էր իր տաղանդը: Երբ կը
սկսէր որ և է նիւթի վրայ խօսիլ, խիզախ
ու յանդուգն ոճ մը կը գործածէր... Ութ
օրը մէկ անգամ, նոր ու աւելի կատարեալ
էակ մը կը դառնար: Ամէն անգամ որ նո-
րէն կը տեսնէի զինքը, ընթերցումներով ա-
ւելի ճոխ, աւելի ներկուռ, դատումով աւելի
զօրեղ կը գտնէի: Իր նամակներն են ամենա-
գեղեցիկ յիշատակը՝ զորս կը ժառանգեմ
իրմէ, ու անոր ամենալաւ զբաժներուն մէկ
մասը կը կազմեն: Իմ դանձերուս մէջ մո-
տունքի մը պէս կը պահեմ իր վերջին նա-
մակը»:

Կէթէ, տեղէն ելլելով, գնաց բերաւ զայն:

— «Տեսէ՛ք ու կարդացէ՛ք» ըսաւ ինծի
տալով զայն:

Նամակը գեղեցկագիւս ոճով ու անդող-

դով ձեռքով մը գրուած էր: Բիմըրին կար-
դացի այն նամակը:

— «Ի՞նչ տեսնէք, ըսաւ կէթէ, ինչպիսի
հզօրամիտ և ուշադրաւ դատումով գրուած
է, ու ինչպէս գիրը տկարութեան նշան մը
չի ցուցներ ընաւ: Կերպարանք ընոյթ մըն էր
ան, ու քաջառոյգ ոյժի մէջ մեզմէ հեռացաւ
անդարձօրէն: Այս նամակը 24 ապրիլ 1805
թուականը կը կրէ: Շիլլէր մայիս 9ին մե-
ռաւ»:

Թարգմ. Ա. Ն. Թ.

ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Գարամանեան Յարութիւն էֆ. ի հանգուց-
եալ եղբօր՝ Յակոբ էֆ. ի մարմինը Բարիզէն
մայրաքաղաքս բերուած ըլլալով, յուղար-
կաւորութիւնը հանդիսաւորապէս կատար-
ուեցաւ երէկ, ուրբաթ, միջօրէէն յետոյ,
Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին:

Հայ և օտարազգի յուղարկաւորներու
խումբ և ընտրեալ բազմութիւն մը ներկայ
էր, որոնց մէջ կը նշմարուէին պետական պաշ-
տօնատարներ, առևտրական ու սեղանաւո-
րական դասի ներկայացուցիչներ և ուրիշ
ծանօթ անձնաւորութիւնք:

Դադաղը մահաբեմի մը վրայ դրուած
ծածկուած էր պօսկներով ու չըջապատուած
կերոններով:

Արարողութեանց նախագահեց Ս. Պատ-
րիարքը, չըջապատուած Տ. Բարթողիմէոս,
Տ. Հմայեակ և Տ. Երէցեան Սրբազաննե-
րէն, բազմաթիւ վարդապետներէ ու քահա-
նայական դասէն:

Դամբանականը խօսեցու Ս. Պատրիարք
Հայրը որ հակիրճ տեսութիւն մը ընելէ ետքը
կեանքի ու մահուան վրայ, խօսքը մասնա-
ւորելով հանգուցելոյն վրայ՝ ներկայացուց
դայն իբրեւ իր դործին զաւակը, ինքնօգնու-
թեամբ յառաջացած ու դիրքի աէր եղած,
ընտանիքի բարի հայր ու պարկեշտ անձ: Ն.
Սրբազնութիւնը յարեց թէ Յակոբ էֆ. Գա-
րամանեան իր կենդանութեանը պատրաս-
տակամութիւն ունեցած էր Աղգ. Հիւանդա-

նոցի նոր բաժնին շինութեան մէկ մասին
ծախքն ստանձնելու, և թէպէտ մահը ժա-
մանակ չթողուց որ իրագործէ իր այս բա-
րեգործական խորհուրդը, բայց անշուշտ կը
գործադրուի անիկայ՝ ի յարգանս յիշատակին:

Ս. Պատրիարքը իր դամբանականն աւար-
տեց երկնային միսիթարութիւն հայցելով
հանգուցելոյն այրիին, եղբօրը և ամբողջ
Գարամանեան ընտանիքին:

Յետոյ, հանդիսաւոր թափօրով տաճարէն
դուրս հանուեցաւ դադաղը որուն ծոպերը
բռնած էին Սարգիս էֆ. Թաշկեան, Տօքթ.
Աղեքսանդր պէյ Արապեան, Կարապետ էֆ.
Թահթապուռն, Բաբսեղ էֆ. Թէքէեան և
այլն: Իսկ կերոնները կը կրէին վեց երիտա-
սարդներ:

Սգակիր կը հետեւէին դադաղին հան-
գուցելոյն եղբայրը՝ Յարութիւն էֆ. ու եղ-
բօրորդին Արամ էֆ. Գարամանեան, խորա-
պէս յուզուած, որոնք եկեղեցւոյ բակին մէջ
ընդունեցին եկեղեցական դասին և բոլոր
յուղարկաւորներուն ցաւակցութիւնները:

Յետոյ, դադաղը մեռելակիր կառքով մը
փոխադրուեցաւ դէպի Շիլլիի աղգ. գերեզ-
մանատունը ուր կատարուեցաւ թաղումը
ընտանեկան դամբարանին մէջ: Բազմաթիւ
յուղարկաւորներ մեռելակիր կառքին հետեւե-
ցան մինչև գերեզմանատուն, հոն ևս իրենց
միսիթարական ու վշտակցական զգացումներն
արտայայտելով Գարամանեան Տեալց:

* *

Էստեան վարժարանին աշակերտները՝ ի-
րենց Տնօրէնին և դաստիարակներու առաջ-
նորդութեամբ ներկայ էին յուղարկաւորու-
թեան և սգակիր չըջապատած էին դադաղը
ի պատիւ Արամ էֆ. Գարամանեանի որ Բե-
րայի Թաղ. Խորհուրդի և Էստեան վարժա-
րանի Հոգաբարձութեան անդամներէն է, և
մասնաւորապէս աշխատութիւն կը նուիրէ
վարժարանին:

ՍՏԱՑԱՆՔ Դաշնակահար Ահարոն էֆ.
Մօրլեանի հեղինակած Motif varié ե-
րաժշտական ձայնատետրը, ձօնուած՝ Երուանդ
էֆ. Տէր—Անդրէասեանի վաղամեռ որդւոյն
Պարոյրի յիշատակին:

ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ

ՏՕՄԻՆՕ, որ ներկայ տարեշրջանի սկիզբէն եռանդուն աշխատակցութիւն մը կը նուիրէ Մասիսին, ինչ որ կը գնահատուի մեր գրասէր ընթերցողներուն կողմէ, յանձնած է մեզ իր Պզտիկ Ուսումնասիրութիւններու շարքին երկրորդը, զոր պիտի հրատարակենք յաջորդ թիւով:

Շէլլիի դործերուն ու անձին նուիրած իր բազմակողմանի ուսումնասիրութեանը առթիւ, որ երեւցաւ Մասիսի նախորդ թիւին մէջ, ՏԻԳՐԱՆ ԵԼՔԷՆՃԵԱՆ գրաբարի թարգմանած է, Խմբագրութեանս հրաւերով, անգլիացի բանաստեղծին գեղեցկագոյն թերթուածներէն մէկը, զոր նոյնպէս պիտի հրատարակենք յաջորդ թիւով:

— o —

ԻԶՄԻՐԻ առաջնորդ Դուրեան Սրբազան այսօր Կ. Պոլիս հասաւ, ասկէ Արմաշ ուղեւորելու համար ուր պիտի կատարէ շրջանաւարտ սարկաւազներուն վարդապետական ձեռնադրութիւնը: — Այսօրուան թիւով կը հրատարակենք բանաստեղծ Սրբազանին սրբապաշտ մէկ ոտանաւորը՝ «արցունքի վայրկեանի մը մէջ գրուած» — ինչպէս ինքն իսկ կը նօթագրէ, — իր մօրը մահուան առթիւ:

ՌՈՒՍԱՀԱՅ Ժանօթ ընտանիքներէն այրի Տիկին իշխանուհի Կատարինէ Բէհրութեանց, իր աղջկը՝ Օր. Մարիամ Բէհրութեանց, Տիկին Վառվառէ Լ. Եւանգուլեանց (դուստր Պ. Աղեքսանդր Մանթաշոֆի) և Օր. Հեղինէ Համգալէմեանց որոնք շարթուս սկիզբը Պաթումէն գալով Մարսիլիա ուղեւորեցան, երկու օր մայրաքաղաքս միացին որու միջոցին Պատրիարքարան երթալով այցելեցին Ս. Պատրիարքին, յետոյ Մայր եկեղեցի իջան ու իրիկուան կողմ ալ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին գացին և ուխտերնին կատարեցին:

ՌՕՊԸՐԴ ՔՕԼԷՃԸ, որուն ամալներլի և վկայականներու բաշխման հանդէսը կատարուեցաւ երեքշաբթի օրը, այս տարի ունեցաւ տասը շրջանաւարտ որոնց հինգը հայ, չորսը յոյն և մէկը պուլկար: Հայ շրջանաւարտներն են՝ Պ. Պ. Անտոն Ե. Փափազեան, Բարսեղ Արապեան, Արամ Մ. Գալէն-

տէր, Գեղամ Զ. Ճյմարտախօսեան և Ներսէս Տէր — Կարապետեան (Նիկոմիդիաէն):

ՍԿԻՒՏԱՐԻ աղջկանց ամերիկեան վարժարանի շրջանաւարտ կարգին վկայականներու բաշխման հանդէսն ալ կատարուեցաւ յաջորդ օրը: Հօմ Սքուլը այս տարի ունէր 9 շրջանաւարտ որոնց չորսը հայ, երկուքը յոյն, երկուքը հրեայ և մէկը պուլկար: Աւասիկ հայ շրջանաւարտները՝ իրենց աւարտական ճառերուն նիւթերով. — Օր. Մաննիկ Ռ. Պէրպէրեան՝ համեմատական ուսումնասիրութիւնն ըրած է Վիքթօր Հիւկոյի և Ալֆրէտ տը Միւսէի, իբրև քնարերգակ բանաստեղծներ: Օր. Գեղանոյ Գ. Գալաֆեան պարզած է գերման իմաստասէր Սքինզոյի վարդապետութիւնները՝ ժամանակակից իմաստասիրական դպրոցին վրայ տեսութիւններով: Օր. Նոյեմի Գրիքեան գրած է ընդարձակ ուսումնասիրութիւն մը Գոդթան երգերու և Շարականներու վրայ: Օր. Վարդուհի Լօլքաճեան ընտրած էր գիտական նիւթ մը, չնչառական դրութեան զարգացումը:

ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐԺԱՐԱՆԻ բերանացի քննութիւնները սկսան այս երեքշաբթի և պիտի տեւեն մինչև յունիս 30, հինգշաբթի, ընդմիջաբար՝ 12 օր: Հայերէն՝ գրաբար և աշխարհարար մատենագրութեան համար ուրոշուած օրն է յունիս 10, ուրբաթ, և ընդհ. գրականութեան պատմութեան համար՝ յունիս 23, հինգշաբթի:

Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ վարժարանին մէջ (Բանկալթի) հաստատուած կիրակնօրեայ առեւտրական դաստարանի շրջանաւարտներն են՝ Պ. Պ. Արմենակ Հօփլամազեան, Բարսեղ Գ. Կիւլպէնկեան, Գրիգոր Տաքէսեան, Յովսէփ Թօփալեան և Լեւոն Ֆրէնկեան որոնք անցեալ կիրակի ստացան իրենց վկայականները: Այս վկայականներէն Պ. Բարսեղ Գ. Կիւլպէնկեան քննական մրցման մէջ յաջողագոյն հանդիսացած ըլլալով, մասնաւոր յիշատակութեան արժանի կը համարուի:

Հիմնադիր — Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ
Տէր ԷԼ ՏԵՐԵԿ — ՏՈՒԹ. ԵԴՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ
Տպագրութիւն ԱՐԵՒԵԼՔ Օրագրի

LA CONFIANCE



ԼԱ. ՔՕՆՖԻԱՆՍ

ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԳ. ԸՆԿ.

Հիմնեալ է ի օգոստոս 1875ին
կը գործէ ուղղակի ճրանա. կառա-
վարութեան հսկողութեան ներքեւ
Ընթացիկ ապահովգր. 339 ՄԻԼԻՈՆ Ֆր.
Դրամագլուխ եւ պահեստ 38 ՄԻԼԻՈՆ Ֆր.
Ընդ. գործակալ Պոլսոյ եւ գաւառաց
ԱՐԱՄ Ս. ԳԱԼՅԱՆԱՆ

Պոլիս, Հանօթուլօ խան Եօ. 53
Գաւառները պատուաւոր գործակալներ կը
փնտռուին: 14—50

ՆԱԶԱՐԻԹ ԽԱԶԷՐԵԱՆ

Փ. Ա. ՍՏԱՐԱՆ

Պոլիս, Մարբուհիօյար. Պարնաբան խան
Թիւ 26

Ամէն կարգի դատար կը ստանձնէ եւ
խնդրոյ առարկայ եղած գործերու համար
Թէ՛ բերանացի եւ Թէ՛ թղթակցութեամբ
բանակցութիւններ կը կատարէ եւ կարծիք
կը յայտնէ. կը խմբագրէ եւ կը թարգմանէ
դատարու եւ առեւտրական ու սովորական
պայմանագրութեանց վերաբերող թուղթեր:

Ուրբաթ օրերը եւս մինչեւ կէս օր ձգեալ
բար խորհրդակցութիւն կը կատարէ եւ կար-
ծիք կը յայտնէ:

Օտ. անօնիմ բնկերութեանց ընդհանուր
ժողովաց յէջ բաժնեատէրերը առանց վարձի
կը ներհալուին:

Ապահովագրական գործառնութիւններու
եւ ի մասնաւորի կեանքի ապահովագրական
բնկերութեանց նկատմամբ տնհրաժեշտ եղող
տեղեկութիւնները ձեռքբար կուտայ, եւ կը
յայտնաբերէ որ մինչեւ որ այս մասին կա-
րեւոր եղած տեղեկութիւնները իրմէ չստաց-
ուին, ապահովագրութիւն չի ստորագրուի:
Ապահովագրական վնասուց հասուցման գու-
մարներու եւ փոխարժեքներու գանձումը
եւս կը ստանձնէ:

Իսկ վարձքի մասին դիւրութիւն եւս
ժանցութիւն կ'ընծայէ: 3—40

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐԻԲԵԼԵԱՆ

ԸՆԴՐԱ, ՄԵՆ ԳՈՂՈՑ ԹԻՒ 200

Կալաթա-Մէրայի Լիօնին դէմ

Գե. Եւ. Շր. օրերը առաւօտեան կանու

խեն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

Բե. Գե. Ուր. օրերը 6 կն մինչեւ 11 1/2

Երակի օրերը ժամադրութեամբ 3—10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻՔՍ,”



ՀԻՄՆԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ 1782 ԻՆ

ՅԵ ԳՈՐԾԷ Ի ՊՈԼԻՍ 1869ԻՆ Ի ՎԵՐ

ԱՆԳԼ. Պ 11 ԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ եւ պահեստի դրամ

Սնդկ. ոսկի 4,218,000

ՖԻՆԻՔՍ առկ հրդեհի դէմ Ապահա-
վագրական Ընկերութիւն մըն է, ծանօթ
իր պատուաւորութեամբ եւ վնասուց մէջ
իր տնօրէնական վճարումներով:

ՖԻՆԻՔՍ կ'ապահովագրէ հրդեհի եւ
կայծակի դէմ մէկն տեսակ տնտրութ եւ
չարժուէն ստացուածք, յորժ նպատաւոր
պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՀԱՏՈՒՑՈՒՄՆ. ՎՆԱՍՈՒՑ: Ցա՛րդ վճա-
րած է առաւել քան 27,000,000 տեղլ.
ապի:

Ընդհ. գործակալ Պոլսոյ եւ գաւառ-
աց: Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վերջալիս խան, Պանգ Օթումանի փոյ
Ղալաթիս:

Փախ դործակալը ի Պոլիս

ՌՈՒՐ. ԱԲԻԿԵԱՆ ՃԻՎԱՆ ԹԷԲԵԱՆ
Էմիւն պէյ խան Ֆնսղեան խան

4—10 Զննիչ բիօգրու

Ա. ԷՆՔՍԷՐՃԵԱՆ

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Փր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Ց Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակագոյց՝ զեղչեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերադանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան մայմանները: Շահաւատիներու տարուէ տարի տնտեսական վնասում, որով իւնիոնի ապահովագրութեան ՉԵՐԾ են այն վնասներէն եւ լուսախաբութիւններէն, որոնց կենթարկուին միշտ այն անձինք, որ շահագործութեամբ բարձրացնեն (accumulation d'es bônéfices) ՅՈՒՐԻ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասմա Քաթրէն Ծղու

Մասնաճիւղ՝ Դալաթիա, Խալէթ Խան:—Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր

քաղաքաց մէջ

5-10

ՓԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԵՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒԴՍ ԼՈՒԻ ՏԵ ՊԱՎԻԵՐ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդգեմ հրդեհի եւ ծովային աւերակումներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւն կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամաւունքն է Ի Կ. Պոլիս, Քուէթ Լիօն

Ընդհ. եւ լիազոր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Գրեմեակ, Պոլիս, Ալեքսան Խան,

5-10



Սնկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սւնենայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՇԱՐԺԱՅԻՆ
ՄԱՍՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- | | | |
|---------|---|--|
| ՌԵՐԱ. | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝ |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿՍԼԱԹԱ. | } | 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊՈՒՐՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԿԻՏԱՐ | | Չարլը Պոլու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասառեալ երաշխաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզդուլուի տունը: 7—10

ԿԱՐԱՊԵՏ ԷՖ. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ ԹՐԳ.		Արուարձանին աղան	3	15
մանած գիրքերէն հետեւեալները կը գըժ		Հանրահաշիւ ոճիւրը	1	5
նուրին Տէր-Մինասեան գրառուներ եւ մայրա.		Սկզբունք Բաղ. Տնտեսութեան	1	4
քաղաքի միւս հայ գրավաճառներուն քով.		Ընտանեկան գաղափարներ	3	15
	հասոք	դրո.		1—10
Կարմիր մարդոց երգումը	2			10
Ընտանեկանը	2			15
Փարիզի մուսնութիւնները	1			2
Թափառական Հրեայ	4			50

ԽԱՉԻԿ ՖԷՍՃԵԱՆԻ
ԴԵՂԱՐԱՆԸ

ուր պիտի գտնէք թարմ եւ առաջին տեսակէն խիտ ազդու
Տաւաջիւի միակ միջառասպան փռի, որ վարկենայեալս կ'օչնէ՝ չափէ մուկը
լուն (փրէէ), ոչիւք, անհնր, մեղր (տիւրիտիէք), ուսինը (կիւվէ), քրքրքը, ցոհնի-ու-
սիւք եւ ուրիշ խել մը միտասկար միջառներ ու ճճիներ. այն փռիները մեծ ու պզտիկ
մտանուոր տակերան մէջ դրուած պատրաստ կը ծախուին: Ուստի ամէն անձք որոնք
պէտք ունին ազդու միջառասպան փռիի եւ կ'ազնն գիշերները անուշիկ-անուշիկ քնա-
նուր եւ առողջութիւնն չը խանգարուած արթննուր, թող հաճին դիմել դեղարանո գին-
լով առսփ մը փռի: քանի որ այս տեսակ պէտք մը գոհացնելու համար դեղարանո ունի
իր դիւրութիւնը՝ Պալոյ կոբեւոր եւ կեդրոն մէկ տեղը գտնուելովը: Աւելորդ նկատած
չենք ըլլոր հոս անգամ մը եւս յիշեցնելու թէ՝ դեղարանո որ Պատ. հասարակութեան չը-
նօրհիւ քիչ ժամանակուան մէջ ջերմ ընդունելութեան արժանացաւ իր ուղղամիտ գործու-
նելութեամբը, միշտ ծառայելով իր նպատակին, այն է դեղերու թարմութեամբ, դեղագրե-
րու արագ եւ ճշդ-պահ պատրաստութեամբ, գիշերու չափաւորութեամբ եւ որ աւելին է
արուեստին խղճամիտ գործադրութեամբ միշտ գոհ ձգելով իր ազնիւ լոճախորդները:

Յիշեցէք նաեւ լավէն որ Դեղատանս յառաջ Հայ եւ օտարագիր բորչկոմբէն ստացուած
բարձր ծանօթ Բժիշկ Ա.Լ.Ա.Հ.Է.ԻՏԻ էն։ որ լավէն Գլ. Ել. Շք. օրեր ժամը 8—11 իրեն
դիմող հիւանդները կը դարմանէ իր ծանօթ փորձառութեամբ եւ մասնաշխատութեամբը
դեղատանիս մասնաւոր դարմանաբահը։

Ահա մասամբ մը պարզելով Դեղաբանի ներկայ վիճակը, կը լուսանք թէ արդոյ լուծարողները ինչպէս ցորդ, յետ այսու եւս միշտ պիտի շարունակեն իրենց վաստակութիւնը Դեղաբանի նշանմամբ, եւ փոխանակ հեռուստ անդեր դիմելու՝ ուղղակի պիտի այցելեն Դեղաբան, ուր մէկն անսահ դիւրութիւններ պիտի ընծայուին իրենց կատարելապէս գոյթողելու համար, քանի որ Դեղաբանի անդրանքը եղած է Ուղղութիւն:

ԴԵՂԱՐԱՆՍՆ ՈՒՆԻ ՆԱԵԻ ԳԻՇԵՐԱՅԷՆ ՍՊԱՍ